«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

# 2023-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ




ԵՂԵԳՆԱՁՈՐ 2023

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ------------------------------------------------------------------------------------- 3

1. Հաստատության գործունեությունը ---------------—----------------------------------------- 6

2. Իրավիճակի վերլուծությունը, ուժեղ և թույլ կողմերը ------------------------------------------11

2.1. Հաստատության շենքային պայմաններն ու նյութատեխնիկական բազան ---------------11

2.2. Հաստատության ֆինանսատնտեսական գործունեությունը ---------------------------------15

2.3. Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները -----------------------18

2.4. Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ ------------------------------------------24

2.5. Հաստատության ուսումնական միջավայրը ----------------------------------------------------29

2.6. Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումները ---------------------------------------------------------------------------------33

2.7. Հաստատության տրամադրած կրթության որակը ------------------------------------------36

2.8. Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաները և կիրառվող նորարարությունները --------------------------------------------------------------------------38

2.9. Հաստատության ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները (ամփոփ վերլուծություն) -----------------------------------------------------------------------------------41

3. Նպատակների և խնդիրների սահմանումը, ակնկալվող արդյունքները---------------------54

4. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունները, միջոցառումների ժամանակացույցը, պատասխանատուները, անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները--------------------------------60

5. Արդյունքների գնահատման չափանիշները և վերահսկողության մեխանիզմները --------86

Եզրափակում------------------------------------------------------------------------------------94

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Եղեգնաձորի Հովհաննես Հովհաննիսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցի 2023-2028թթ. զարգացման ծրագիրը ռազմավարական փաստաթուղթ է, որն արդի պետական կրթական քաղաքականության պահանջներին համապատասխան ուրվագրում է դպրոցի գործունեության, զարգացման առաջիկա հինգ տարիների հիմնական ուղղությունը, նպատակներն ու խնդիրները, լուծման եղանակներն ու սկզբունքները, հնարավոր ռիսկերը և դրանց կանխարգելման ուղիները:

Այն նպատակ ունի բարելավելու սովորողների կրթական արդյունքները, հանրակրթական ուսումնական հաստատությունում ուսուցման և ուսումնառության գործընթացը, մշակելու արդիական մարտահրավերներին համապատասխան համապիտանի ուսումնական պլան, ապահովել անձնակազմի և սովորողների համար աջակցող, անխռով միջավայր, ապահովել ծնողների և համայնքի ներգրավվածությունը դպրոցի գործունեության մեջ, արդյունավետ կառավարել ու բաշխել ռեսուրսները, գնահատել դպրոցի գործունեությունն ու այդ տվյալների հիման վրա կայացնել որոշումներ, ապահովել անձնակազմի կարողությունների շարունակական զարգացումը, ներդնել տեխնոլոգիաներ հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման, ուսումնադաստիարակչական և վարչատնտեսական աշխատանքների կազմակերպման գործընթացում, համագործակցել համայնքի հետ, նախագծել բնապահպանական կայունություն, ինչպես նաև ապահովելու հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության գնահատումը, հաշվետվողականությունն և թափանցիկությունը:

Ինչպես դպրոցի գործունեությունն առհասարակ, այնպես էլ զարգացման ծրագիրը խարսխված է հետևյալ հիմնարար փաստաթղթերի վրա և որպես ուղենիշ՝ ունի այն հիմնախնդիրների լուծումը, որոնք անշեղորեն տանում են դեպի ռազմավարական ծրագրի նպատակների իրականացում՝

1. Կրթության մասին ՀՀ օրենք,
2. Հանրակրթության մասին ՀՀ օրենք,

3. Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին ՀՀ օրենք,
4. Հայաստանի Հանրապետության կառավարության 18.08.2021 թվականի N 1363-Ա որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների ծրագրի մասին»,
5. Հայաստանի Հանրապետության կառավարության 28.07.2022 թվականի N 1174-Ա որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին,
6. Դպրոցի կանոնադրություն,
7. Դպրոցի զարգացման 2018-2023թթ. ծրագիր,
8. Դպրոցի գործունեության ներքին գնահատման հաշվետվությունները,
9. «Եղեգնաձոր համայնքի 2022-2026 թվականների հնգամյա ծրագիրը»,
10. Մանկավարժական կոլեկտիվի ձեռքբերումները,
11. Դպրոցում առկա հիմնախնդիրները,
12. Մանկավարժական, ծնողական, աշակերտական ու շրջանավարտների խորհուրդների, համայնքի կողմից առաջադրված հարցերը, խնդիրներն ու առաջարկությունները,

Այսպիսով՝ ծրագիրը մշակվել է՝ մի կողմից հենվելով ՀՀ համապատասխան օրենսդրական կարգավորումների, կրթության ոլորտում այս պահին իրականացվող արմատական փոփոխությունների հիմնական ուղենիշերի վրա, մյուս կողմից՝ նկատի առնելով այն միջավայրի հիմնախնդիրներն ու առանձնահատկությունները, որտեղ դպրոցը գործառնում է:

Այս առումով ծրագրի հենքը Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագրի պահանջներն են, բայց այն մշակելիս իրականացվել են նաև քննարկումներ, հարցումներ մանկավարժական կոլեկտիվի, ծնողների ու աշակերտների շրջանում: Նրանց կողմից հնչեցված մտահոգություններն ու առաջարկությունները նկատի են առնվել զարգացման ծրագրի նպատակն և խնդիրները, դրանց լուծման ուղիները մշակելիս: Ծրագիրը մշակելիս նկատի են առնվել նաև դպրոցի

շրջանավարտների, համայնքի ներկայացուցիչների հետ տարբեր առիթներով ունեցած հանդիպումների ընթացում ունեցած քննարկումները, առաջարկությունները:

Ծրագրի վերջնանպատակը սովորողների համակողմանի ու ներդաշնական զարգացման համար բարենպաստ պայմանների ու միջավայրի ստեղծումն է, որը կնպաստի ժամանակակից աշխարհում արագ ու ճիշտ կողմնորոշվելու կարողություններ, ճկուն ու ստեղծագործական մտածողություն ունեցող քաղաքացու ձևավորմանը, ով կունենա ազգային արժանապատվության խոր գիտակցություն, ազգային արժեքների արժևորման ու դրանց պահպանման պատասխանատվություն, կկարողանա ինտեգրվել սոցիումին ու կունենա իր ներուժին և նախասիրություններին համապատասխան մասնագիտական կողմնորոշում:

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոցի զարգացման ծրագրի մշակման ընթացքում կազմակերպվել են կարիքների բացահայտման քննարկումներ, առանձնացվել են որակի կառավարմանը, մեթոդական գործիքակազմին, մշտադիտարկման և գնահատման մեխանիզմներին, ռիսկերի արդյունավետ գնահատմանը առնչվող խնդիրները, որի արդյունքում կատարվել են համալիր վերլուծություններ և առաջադրվել են հնարավոր լուծումներ ու գործողություններ:

Այս փաստաթղթի հիման վրա պետք է կազմվեն տարեկան աշխատանքային պլանները:

**Ծրագիրը կազմված է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 22-ի N 35-Ն հրամանով հաստատված պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափին համապատասխան:**

# 1. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

## Ա) Կրթական կարիքների բավարարումը

Մեր դարաշրջանի կարևորագույն առանձնահատկություններից մեկը գիտության ու տեխնիկայի զարգացման աննախադեպ տեմպն է, ինչը կրթական համակարգերի համար հրամայական է դարձրել կրթության բովանդակության անընդհատ փոփոխումն ու կատարելագործումը: Փոփոխությունների այս մեծ հոսքն իր հետ բերում է նաև անընդհատ սովորելու, ձեռք բերածը վերաիմաստավորելու հրամայականներ: Օրավուր մեծանում է տեղեկատվական տեխնոլոգիաների դերն ու նշանակությունը որակյալ կրթության կազմակերպման գործընթացում:

Այսպիսի պայմաններում Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոցի գործունեության նպատակը յուրաքանչյուր սովորողի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ), զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է, մասնավորապես՝

ա) Սովորողի շարունակական կրթությունն ապահովող անձնային որակների ձևավորումը,

բ) Սովորողներին հիմնարար գիտելիքներ տալը,

գ) Կրթության մեջ ուսուցման պրակտիկ ուղղվածությանն առաջնահերթություն տալը, որ սովորողը կարողանա ձեռք բերված գիտելիքներն ու կարողությունները կիրառել գործնականում,

դ) Սովորողին ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալելու հնարավորության ընձեռումը,

ե) Ուսումնահետազոտական գործունեության համար պայմանների ստեղծումը,

զ)Ուսումնառության ընթացքում ստեղծագործական աշխատանք կատարելու կարողության զարգացումը,

է) Սովորողների հաղորդակցական կարողությունների ձևավորումը,

ը) Սովորողների տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելը,

թ) Հոգևոր-մշակութային բարձր արժեքների ուսուցանման ապահովումը,

ժ) Ռազմահայրենասիրական դաստիարակության ապահովումը,

ի) Մասնագիտական կողմնորոշումը,

լ) Կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման, կրթության անհատականացման շնորհիվ կրթություն ստանալու համար անհրաժեշտ պայմանների ձևավորումը:

Սովորողների ընդհանուր և հատուկ կրթական կարիքների բավարարումն իրականացվում է հետևյալ երեք ոլորտների ներդաշնակ ու համագործակցային աշխատանքի արդյունքում՝

- Կառավարում (սովորողների ընդհանուր և հատուկ կրթական կարիքների բացահայտում և նկարագրություն, դրանց բավարարմանն ուղղված գործողությունների ճանապարհային քարտեզի մշակում),
- Ուսումնադաստիարակչական աշխատանքների (ինչպես բուն ուսումնական պրոցեսի, հարակից մարզամշակութային, սոցիալական միոցառումների, քննարկումների, սեմինարների) կազմակերպում,
- Վարչատնտեսական գործունեության (ուսումնական գործընթացի կազմակերպման համար նպաստավոր միջավայրի ապահովման) կազմակերպում:

Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոցը, հավատարիմ մնալով իր գերակա նպատակին, ուսուցման և ուսումնառության արդյունավետ միջոցների ներդրմամբ և կրթական կարիքների բավարարման միջոցով լծված է ձևավորելու համակողմանիորեն զարգացած, մասնագիտորեն կողմնորոշված, մարտահրավերներին դիմակայելու պատրաստ,

ստեղծագործելու ու քննատական մտածողությամբ օժտված, ազգային արժեքներ կրող, հայրենասեր ու մարդասիրության ոգով դաստիարակված կոմպետենտ քաղաքացիներ:

**Բ) Համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին**

Դպրոցի գործունեությունը կարգավորվում է կրթության ոլորտում ՀՀ որդեգրած օրենքներով և կազմակերպվում է երկրի կրթական քաղաքականության գերակայություններին համահունչ, այն է՝ ձևավորել քաղաքակիրթ, ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ, մրցունակ և ապագան իր սեփական երկրում պատկերացնող քաղաքացիներ: Ինչպես սահմանում է ՀՀ 2011-2026թթ. ծրագիրը, դպրոցում առանցքային նշանակություն ունեն՝

- ներառական կրթական միջավայրի ստեղծումը,
- կրթության բովանդակության և կրթական ծրագրերի արդիականացումը,
- մինչև 2026 թվականը հանրակրթության նոր չափորոշիչների ամբողջական ներդրումը,
- անհրաժեշտ ենթակառուցվածքների արդիականացումն ու վերազինումը,
- ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառումը ուսուցման և կառավարման համակարգերում,
- կրթական որակյալ բովանդակությունը,
- բարձրորակ ուսուցչական համակազմը,
- դպրոցների թափանցիկ ու արդյունավետ կառավարումը,
- «կրթություն-գիտություն-աշխատաշուկա» կապի ամրապնդումը:

Եղեգնաձորի թիվ 2 դպրոցն ակտիվ համագործակցում է պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական, հասարակական կազմակերպությունների, բարձրագույն ու միջին մասնագիտական ուսումնական

հաստատությունների հետ, ինչը հնարավորություն է տալիս առավել ամբողջական պատկերացնել մարտահրավերները, համայնքի զարգացման հնարավորությունները, պահանջներն ու կարիքները, սովորողներին՝ որպես ապագա մասնագետին ու քաղաքացուն ներկայացվող պահանջները:

## Գ) <u>Հաստատության ենթակառուցվածքները, մարդկային ռեսուրսներն ու հնարավորությունները</u>

Ուսումնական հաստատությունը ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2003 թվականի հունվարի 17-ին (գրանցման համար 65.210.00421, վկայական N 03 Ա 058344): «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի Հովհաննես Հովհաննիսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությունը ՀՀ Վայոց ձորի մարզպետի որոշմամբ նոր խմբագրությամբ հաստավել է 2017 թվականի հոկտեմբերի 9-ին (ՀՀ Վայոց ձորի մարզպետի 09.10.2017 թվականի թիվ 68 որոշում):

2017 թվականի հոկտեմբերի 9-ին նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրության մեջ կատարվել են փոփոխություններ 2021 թվականի փետրվարի 9-ին (ՀՀ Վայոց ձորի մարզպետի 09.02.2021 թվականի N 16-Ա որոշում) և 2022 թվականի հոկտեմբերի 14-ին (ՀՀ Վայոց ձորի մարզպետի 14.10.2022 թվականի N 202-Ա որոշում):

Դպրոցն ունի անշարժ գույքի սեփականության վկայական՝ տրված 2020 թվականի օգոստոսի 5-ին. վկայականի համարը՝ N 05082020-10-0018:

Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թվականի ապրիլի 16-ի N 285-Ա/Ք հրամանով տրված Ա N 0858 և Ա N 0849 լիցենզիաների՝ դպրոցն իրավունք է ստացել իրականացնելու հետևյալ կրթական ծրագրերը.

-Տարրական հանրակրթական ծրագիր՝ 280 սահմանային տեղով,

-Հիմնական հանրակրթական ծրագիր՝ 208 սահմանային տեղով:

Դպրոցի շենքը տիպային է. բաղկացած է մեկ մասնաշենքից՝ 1616,7 քմ ընդհանուր մակերեսով: Շենքը հիմնանորոգվել է 2004 թվականին:

Դպրոցի ընդհանուր տարածք 3660 քմ է,  որը մեջ ընդգրկված են դպրոցը, կաթսայատուն, պարիսպ, սպոտիրապարակ և բակ:

Դպրոցում աշխատում են 53  մանկավարժներ, որոնք բոլորն էլ ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն:

Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածության գործակիցը 16,9 ժամ է, նրանց 84%-ն անցել են ատեստավորման համար կազմակերպված պարտադիր վերապատրաստումներ, 16%-ը՝ 2023-24 ուստարում:

Տարակարգի առաջին աստիճան ունեն 3 ուսուցիչ, երկրորդ աստիճան՝ 2 ուսուցիչ, կամավոր ատեստավորման արդունքում  1 ուսուցիչ հաղթահարել է 60 տոկոսի,  1 ուսուցիչ՝ 70 տոկոսի, 5 ուսուցիչ 80 տոկոսի շեմը:

2023-2024 ուստարում դպրոցում կոմպլեկտավորվել է 24 դասարան, որտեղ սովորում են 611 աշակերտներ:

2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր բնակավայրում հաշվառված են թվով 9500 բնակիչ: Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոցում սովորում է 627 աշակերտ, որից 20-ը ԼՂ-ից բռնի տեղահանված ընտանիքներից են: Չնայած Եղեգնաձորի հարակից բոլոր բնակավայրերում միջնակարգ դպրոցներ կան, Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոց են հաճախում նաև հարակից գյուղական բնակավայրերից 69 սովորողներ (Ագարակաձորից, Գլաձորից, Գետափից, Մալիշկայից, Արփիից, Վերնաշենից և Աղնջաձորից), ինչը վկայում է դպրոցի բարձր հեղինակության ու մատուցած որակյալ կրթական ծառայությունների մասին:

Նկատի առնելով «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի Հովհաննես Հովհաննիսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի  վերը ներկայացված ենթակառուցվածքները և կրթական ծրագրեր իրականացնելու հնարավորություններն ու հմտությունները և համադրելով բնակավայրի մարդկային ռեսուրսների և կանխատեսվող պահանջների հետ՝ վստահաբար կարելի է եզրակացնել, որ բնակավայրում գործող հանրակրթական դպրոցը լիովին պատրաստ է մատուցելու կրթական պատշաճ ու մրցունակ ծառայություններ:

# 2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ, ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

## 2.1 Հաստատության շենքային պայմաններն ու նյութատեխնիկական բազան

Եղեգնաձորի Հովի. Հովհաննիսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցը հիմնադրվել է 1962 թվականին: 1994թ. դպրոցն անվանակոչվել է արցախյան հերոսամարտի հերոս Հովհաննես Հովհաննիսյանի անունով:

Դպրոցը գտնվում է Վայոց ձորի մարզկենտրոնում՝ Եղեգնաձոր քաղաքում: Այն քաղաքում գործող երկու հիմնական դպրոցներից մեկն է: Դպրոցը երկհերթ է, հնգօրյա: Դպրոցում պարբերաբար կատարվում են ներքին հարդարման աշխատանքներ:

Դպրոցի շենքը տիպային է, ունի մեկ մասնաշենք՝ **1616.7** քմ ընդհանուր մակերեսով, երեքհարկանի է՝ նախատեսված իրականացնելու կրթական ծրագրեր՝

- Տարրական ընդհանուր՝ 280 սահմանային տեղով
- Հիմնական ընդհանուր ՝ 208 սահմանային տեղով

Ուսումնական հաստատությունում առկա են հետևյալ շենքային պայմաններն ու հարմարությունները.

| հ/հ | Շինությունների և հարմարությունների անվանումը | Քանակ | Մակերես |
|---|---|---|---|
| 1 | Առանձնասենյակ | 4 | 112.2 |
| 2 | Դասարան | 16 | 597.1 |
| 3 | Առարկայական լսարան | 3 | 76.1 |
| 4 | Լաբորատորիա/ֆիզիկա, քիմիա/ | 2 | 21.2 |
| 5 | Արհեստանոց | 1 | 59 |
| 6 | Մարզադահլիճ | 1 | 136 |
| 7 | Գրադարան | 1 | 44.5 |
| 8 | Ճաշարան | 1 | 45.7 |
| 9 | Սանհանգույց | 3 | 31.3 |

| | | | |
|---|---|---|---|
| 10 | Մարզահրապարակ | 1 | 1774.8 |
| 11 | Բուժկետ | 1 | 6.7 |

## Այլ պայմաններ ու հնարավորություններ:

Շենքի ջեռուցվող ընդհանուր մակերեսը կազմում է 1616.7 քմ: Ջեռուցման տեսակը լոկալ է: Ջեռուցման օրերի թիվը 120 է:

Շենքի ներսի մաքրվող մակերեսը 1616.7 քմ է, դրսի մաքրվող մակերեսը՝ 1400 քմ, սանհանգույցների մաքրվող մակերեսը՝ 36.6 քմ:

Ուսումնական հաստատությունում առկա են 17 միավոր համակարգիչ, 4միավոր նոթբուք, 2 միավոր էլեկտրոնային գրատախտակ, 4 SMART հեռուստացույցներ և այլ տեխնիկա:

Դպրոցի շենքի շահագործումը համապատասխանում է անվտանգ շահագործման նորմատիվներին, պահպանվում է հակահրդեհային անվտանգությունը:

Հաստատության բոլոր դասասենյակները ձևավորված են և կահավորված:

Վերանորոգման արդյունքում սանհանգույցները համապատասխանեցվել են սանիտարական նորմերին, մասնավորապես՝ հենաշարժողական խնդիրներ ունեցող աշակերտների պահանջներին:

Չնայած շենքային բավականին լավ պայմաններին՝ առկա են նաև որոշ թույլ կողմեր ու խնդիրներ, մասնավորապես՝

- Դպրոցն աշխատում է գերբեռնված, կարիք կա նոր մասնաշենքի,

. Որոշ դասասենյակների մակերեսը չի համապատասխանում սահմանված ստանդարտներին,

- Չկան առարկայական կաբինետներ, առկա նյութատեխնիկական ռեսուրսների մի մասը նորով փոխարինման կարիք ունի,
- Հատկապես բնագիտական առարկաների գործնական պարապմունքների իրականացման համար առկա չեն լաբորատոր սարքավորումներ, ինչը խոչընդոտում է ուսումնական գործընթացի արդյունավետությանը,
- Բաց մարզահրապարակը կարիք ունի վերանորոգման:

Նշված խնդիրները դպրոցը փորձում է լուծել ինչպես պետական ծրագրերի, այնպես էլ տարբեր համագործակցությունների, դրամաշնորհային ծրագրերի շրջանակում՝ բարելավելով շենքային պայմանները, թարմացնելով դպրոցական գույքը, ձեռք բերելով ժամանակակից տեխնիկա՝ այդպիսով արդիականացնելով և համապատասխանեցնելով կրթական միջավայրը արդի պահանջներին:

Ստորև ներկայացված են լուսանկարներ, որտեղ արտացոլված են հաստատության շենքային պայմաններն ու նյութատեխնիկական բազան:



## 2.2 Հաստատության ֆինանսատնտեսական գործունեությունը

Դպրոցը ֆինանսավորվում է պետբյուջեից՝ ըստ իրականացնող հանրակրթական ծրագրի՝ կախված սովորողների թվից: Նախորդ տարիներին դպրոցի արդյունավետ գործառնության շնորհիվ աշակերտների թվի կայուն աճ է արձանագրվել, ինչն իր հերթին դպրոցի համար լրացուցիչ ֆինանսական հոսքեր է ապահովել: Այդ հոսքերի գրագետ պլանավորման ու խնայողությունների հաշվին նախորդ տարիների ընթացքում դպրոցը բավականաչափ համալրել է գույքն ու տեխնիկան:

2023թ-ի սեպտեմբերից սկսած ՀՀ Կառավարության որոշումով և ԿԳՄՍՆ նախարարի հրամանով դպրոցները ֆինանսավորվում են ըստ դասարանների թվի, ինչը, մեծ հաշվով, նպատակ ունի բալանսավորելու դպրոցների ֆինանսական վիճակը և ապահովելու դրանց հնարավորինս արդյունավետ գործառնությունը՝ ի նպաստ աշակերտի, մանկավարժի և ամբողջ կոլեկտիվի ՝ ունենալով մեկ կարևոր նպատակ, այն է՝ բարձրացնել կրթության որակը՝ հասանելի և հավասար դարձնելով բոլորին:

Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը հստակ է և թափանցիկ: Տվյալ ուստարվա բյուջեի նախագիծը, ըստ դպրոցի կանոնադրության պահանջի, պահպանելով հանրակրթական ուսումնական հաստատության բյուջետային օրացույցին ներկայացվող պահանջները, տրվում է կառավարման, մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդներին՝ առաջարկություններ ստանալու նպատակով, ապա ներկայացվում լիազոր մարմնի հաստատմանը: Նախահաշիվը և ֆինանսատնտեսական հաշվետվությունները տեղադրվում են դպրոցի և մարզպետի աշխատակազմի կայքում: Դպրոցը նոր ֆինանսական տարին միշտ ազդարարում է առանց պարտքերի: Ավելին, ճիշտ ու գրագետ կառավարման շնորհիվ դպրոցն ունի խնայողություններ, որոնց բաշխումը ևս ներառված է դպրոցի զարգացման՝ 2023-2028թթ. հնգամյա ծրագրում:

Բյուջեի ծախսերի հիմնական ուղղություններն են.

- աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ,
- կոմունալ վճարներ,
- գրասենյակային և տնտեսական ապրանքներ,

- գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր,
- շենքի պահպանության ծախսեր,
- հատուկ նպատակային ծախսեր,
- տեղեկատվական ծառայություն,
- մասնագիտական ծառայություն,
- պետական հարկեր և տուրքեր,
- մեքենաների և սարքավորումների վերանորոգման աշխատանքներ,
- կենցաղային հանրային սնունդ:

Դպրոցի՝ վերջին 5 տարիների ֆինանսական ցուցանիշները ներկայացված են ստորև:

| Ֆինանսական ցուցանիշներ | 2019թ. | 2020թ. | 2021թ. | 2022թ. | 2023թ. |
|---|---|---|---|---|---|
| Մուտքեր | 111,881,000 | 126,221,700 | 126,432,600 | 119,849,900 | 99,988,400-օգոստոս |
| Ծախսեր | 113,292,000 | 99,991,700 | 123,119,700 | 134,214,100 | |
| Խնայողություններ | 11,870,400 | 10,459,400 | 26,230,000 | 29,542,900 | 15,178,700 |

2019-2023թթ. ֆինանսական ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք հիմնականում համապատասխանում են 2018-2023թթ. դպրոցի զարգացման ծրագրի նպատակներին և չեն շեղվել պլանային ցուցանիշներից, եղել են արդյունավետ ու նպատակային:

Ըստ հաստատության 2023-2024 ուսումնական տարվա (առաջին կիսամյակ) տարիֆիկացիոն ցուցակի՝ հաստատության թվով 53 աշխատողների ամսական աշխատավարձի ֆոնդը կազմում է 8600427 ՀՀ դրամ, որից՝

| հ/հ | Աշխատող | հոգի | Դրույք | ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|
| 1 | Վարչական աշխատող | 4 | 3 | 795012 |
| 2 | Մանկավարժական աշխատող | 39 | 35.3 | 5870845 |
| 3 | Հաշվապահ | 1 | 1.5 | 265569 |
| 4 | Ուսումնաօժանդակ անձնակազմ | 2 | 4.5 | 516516 |
| 5 | Սպասարկող անձնակազմ | 7 | 11.25 | 1152485 |

Չնայած առկա ռեսուրսներին՝ դպրոցի համար այս տեսանկյունից թույլ կողմեր են

- արտաբյուջեի բացակայությունը,
- դպրոցի նյութատեխնիկական բազայի հարստացման ու վերազինման համար համագործակցությունների, դրամաշնորհների միջոցով ստացվող միջոցների սակավությունը,
- դպրոցի և սպորտհրապարակի վերանորոգման համար միջոցների սակավությունը:
- կից մասնաշենքի կառուցման համար ֆինանսական միջոցների բացակայությունը:

## 2.3 Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները

Համաձայն «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի Հովհաննես Հովհաննիսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության 27-րդ կետի՝ դպրոցի կառավարման մարմիններն են.

1) ***հիմնադիրը,***

2) ***Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, տարածքային կառավարման մարմինը (լիազորված մարմին).***

3) ***կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը.***

4) ***գործադիր մարմինը՝ դպրոցի տնօրենը և վարչատնտեսական մասի համակարգողը:***

Հաստատությունում իրականացվում է կոլեգիալ կառավարում: Կոլեգիալ կառավարումն իրականացնող մարմինը հաստատության խորհուրդն է:

Համաձայն «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 67-րդ կետի՝ կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով դպրոցում ձևավորված են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական և շրջանավարտների խորհուրդներ:

***Դպրոցի կառավարումն ու գործառնությունն իրականացվում է Գծապատկեր 1-ի տրամաբանությամբ՝***




Եղեգնաձորի Հովի. Հովհաննիսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցի՝

- Կառավարման խորհուրդը կազմված է 9 անձից,
- Մանկավարժական խորհուրդը կազմված է 39 մանկավարժական աշխատողներից,
- Ծնողական խորհուրդը կազմված է 24 անձից,
- Աշակերտական խորհուրդը կազմված է 20 աշակերտից:

Խորհրդակցական բոլոր մարմիններն ունեն իրենց կանոնադրությունը, որը կազմվել է դպրոցի կողմից՝ հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությունը: Կանոնադրությամբ սահմանվել են տվյալ մարմնի գործունեության ոլորտները և կարգը:

Խորհուրդներն ունեն իրական ինքնավարություն, ազատ են իրենց գործողություններում, պահպանում են իրենց իրավունքներն ու պարտականությունները:

***Հաստատության կառավարման մարմնի՝ խորհրդի և տնօրենի համագործակցությունն իրականացվում է վերջիններիս օրենքով և հաստատության կանոնադրությամբ վերապահված հետևյալ լիազորությունների իրականացման շրջանակներում.***

*Հաստատության կառավարման մարմինը (խորհուրդը)* գործում է դպրոցի կանոնադրության և լիազոր մարմնի կողմից սահմանված կարգերով իրեն վերապահված գործառույթներին համապատասխան: Նրա գործունեությունը միտված է դպրոցի բնականոն զարգացմանը: Խորհուրդը շահագրգիռ է դպրոցի առաջընթացի հարցում՝ պատրաստակամորեն աջակցում է բոլոր նախաձեռնություններին: Այն՝

1) տնօրենի գործունեության նկատմամբ իրականացնում է ընթացիկ վերահսկողություն,

2) հաստատում է դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները,

3) կարող է սահմանել պակաս խտությամբ դասարան՝ դպրոցի լրացուցիչ ֆինանսական միջոցների հաշվին,

4) տնօրենի ներկայացմամբ՝ քննարկում է ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջեի նախագիծը, բյուջետային ֆինանսավորման հայտը, հաստիքացուցակը, տարիֆիկացիոն ցուցակները, տալիս է հավանություն և ներկայացնում համապատասխան լիազորված մարմին,

5) քննարկում է ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական գործունեության, այդ թվում՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները,

6) որոշում է մասնակցել արտաքին գնահատմանը, քննարկում է ներքին և արտաքին գնահատման արդյունքները,

7) վերահսկում է դպրոցի զարգացման ծրագրի կատարումը,

8) հիմնադրի սահմանած կարգով սահմանում է դպրոցի շահույթի տնօրինման հիմնական ուղղությունները,

9) լսում է գույքի օտարման և (կամ) ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների վերաբերյալ տնօրենի ներկայացրած առաջարկությունները և տալիս հավանություն,

10) լիազորված մարմին է ներկայացնում առաջարկություններ՝ ուսումնական հաստատության գործունեության բնագավառին, նպատակներին և խնդիրներին համապատասխան,

11) քննարկում է դպրոցի ծնողական խորհրդի՝ տնօրենի նկատմամբ անվստահության վերաբերյալ առաջարկը և այն, իր դիրքորոշման հետ միասին, ներկայացնում է լիազորված մարմնի ղեկավարին,

12) իրականացնում է օրենքով հիմնադրի կողմից իրեն վերապահված և /կամ/ դպրոցի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

**Հաստատության տնօրենը՝**

1) խորհրդի քննարկմանն է ներկայացնում դպրոցի ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունը, արտաքին և ներքին գնահատման արդյունքները, հաջորդ տարվա բյուջեի նախագիծը և բյուջետային ֆինանսավորման մասին հայտը՝ դրանում առանձին տողով ներկայացնելով մանկավարժահոգեբանական աջակցութան ծառայությունները,

2) կազմում է դպրոցի տարիֆիկացիան, հաստիքային ցուցակն ու ամենամյա ծախսերի նախահաշիվը և հաստատության խորհրդի հավանությամբ ներկայացնում լիազորված մարմին,

3) խորհրդի հավանությանն է ներկայացնում դպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կազմը,

4) աջակցում է դպրոցի խորհրդակցական մարմինների աշխատանքներին,

5) մասնակցում է խորհրդի նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով,

6) նախարարության կողմից հաստատված ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի հիման վրա մշակում և խորհրդի հաստատմանն է ներկայացնում դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար անցկացվելիք մրցույթի կարգը, դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները,

7) օրենքով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն օրենքների, հիմնադրի, նախարարության, լիազորված մարմնի և խորհրդի որոշումների, այլ իրավական ակտերի և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Դպրոցի տնօրենը ժամանակին միջոցներ է ձեռնարկում խորհրդակցական մարմինների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու, ձևական գործընթացները դադարեցնելու համար: Այդ նպատակով.

1. Մանկավարժական խորհրդի անդամների համար կազմակերպվում են սեմինարներ՝ դպրոցի հիմնարար փաստաթղթերին ծանոթացնելու համար,
2. Առարկայական մեթոդական միավորումների նախագահների համար կազմակերպվում են սեմինարներ «Առարկայական մեթոդական միավորման աշխատանքների պլանավորումը և կազմակերպումը» թեմայով,
3. Ձեռնարկվում են միջոցներ առարկայական մեթոդական միավորումների մեթոդական աշխատանքի կազմակերպման զինանոցը զարգացնելու ուղղությամբ՝ գործող փորձի ուսումնասիրության միջոցով:

Դպրոցի տնօրենը համագործակցում է և՛ կառավարման, և՛ խորհրդակցական մարմինների հետ. դպրոցի գործունեությունը բաց է և թափանցիկ:

__**Մանկավարժական խորհուրդը**__ պատշաճորեն կատարում է կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթները. խորհրդի նիստերը գումարվում են հնարավորինս լայն

մասնակցությամբ: Խորհուրդն անհրաժեշտաբար քննարկում է նաև զարգացման ծրագրի իրագործման հետ կապված խնդիրները, անդրադառնում է ընթացիկ հարցերին և կոլեկտիվ պատասխանատվություն կրում ընդունված որոշումների համար:

**Աշակերտական խորհուրդը** հնարավորինս ակտիվ է և գործում է ժողովրդավարական սկզբունքներով: Դպրոցի տնօրենությունը խթանում է սովորողների նախաձեռնությունները, օժանդակում դրանց իրագործմանը:

Աշակերտական խորհուրդը հանդես է գալիս առաջարկություններով, որոնք վերաբերվում են ներքին կարգապահական կանոնների կենսագործմանը, սովորողների արտաքին տեսքին, կեցվածքին կամ այլ խնդիրներին: Ըստ անհրաժեշտության կազմակերպում է տարբեր հանդիպումներ, տարաբնույթ ճանաչողական այցեր:

Կարևորելով աշակերտական ինքնակազմակերպումն ու ինքնակառավարումը՝ պարբերաբար անցկացվում են հանդիպումներ սովորողների հետ. լսում են նրանց, ստեղծված խնդիրներին տալիս են համապատասխան լուծումներ:

Անչափ կարևորվում է աշակերտների կողմից բարձրացված հարցերի խորը և մասնագիտական վերլուծությունը, աշակերտական խորհրդի նախաձեռնողականության խթանումը:

Աշակերտական խորհրդի նախագահը, ըստ անհրաժեշտության, խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին: Ըստ կանոնադրության՝ պարտաճանաչորեն գումարում է նիստերը հստակ օրակարգերով, վարում աշակերտական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյանը:

**Ծնողական խորհուրդը** մշտապես իրազեկ է և ներգրավված դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում: Ծնողական խորհրդի նախագահը խորհրդակցական ձայնի իրավունքով, ըստ անհրաժեշտության, մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին: Ըստ կանոնադրության՝ պարտաճանաչորեն գումարում է նիստերը հստակ օրակարգերով, վարում ծնողական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյանը:

Ծնողական խորհուրդը դասարանական ծնողխորհուրդների միջոցով կազմակերպում է ճանաչողական էքսկուրսիաներ, այցելություններ թանգարանային վայրեր, իրականացնում այլ միջոցառումներ:

Դպրոցի կառավարման որպես թույլ կողմ կարելի է դիտարկել հետևյալը՝

- Դպրոցի ծնողական խորհուրդի ոչ շատ ակտիվությունը իրեն հասանելի նախաձեռնությունների շրջանակում,
- Աշակերտական խորհրդի ոչ շատ ակտիվ ու նախաձեռնող լինելը:
- Շրջանավարտների խորհրդի ձևավորված չլինելը: Չնայած ֆորմալ առումով շրջանավարտների խորհուրդ ձևավորված չէ, դպրոցի շրջանավարտներն առանձնակի ակտիվ են, նրանք սերտորեն կապված են դպրոցի հետ, մշտապես փորձում են իրենց կարողությունների սահմանում աջակցել դպրոցի առջև ծառացած մարտահրավերների լուծմանը, դպրոցի զարգացմանը:

## 2.4 Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների անքակտելի մասն են կազմում գրեթե բոլոր պետական ու համայնքային կառույցների հետ մշտական աշխատանքն ու համագործակցությունը:

Դպրոցն ակտիվ մասնակցում է համայնքում կազմակերպվող տարաբնույթ միջոցառումների, քննարկումների, հանդիպումների, տոնակատարությունների, համայնքային շաբաթօրյակների ու կամավորական զանազան նախաձեռնությունների: Սա սովորողների մոտ ակտիվ ու պատասխանատու քաղաքացի ձևավորելու կարևորագույն նախապայմաններից է: Մյուս կողմից՝ համայնքն ուսումնասիրելու, համայնքային խնդիրների վերհանումը դպրոցում ևս խիստ կարևորվում է: Տարբեր դասաժամերի շրջանակում նախագծային աշխատանքների միջոցով սովորողները իրենց առաջնորդող

ուսուցիչների շնորհիվ պարբերաբար ուսումնասիրում ու վերհանում են համայնքային հիմնախնդիրները:

Դպրոցը համագործակցում է նաև տեղի նախադպրոցական ուսումնական հաստատությունների, հարակից ուսումնական հաստատությունների՝ արվեստի ու երաժշտական դպրոցի, մասնագիտացված ուսումնական հաստատությունների՝ մասնավորապես Վայոց ձորի տարածաշրջանային քոլեջի հետ, մարզային գրադարանի, գործարար միջավայրի ներկայացուցիչների, ոստիկանության ու արտակարգ իրավիճակների նախարարության, պաշտպանության նախարարության, առողջապահության նախարարության մարզային կառույցների հետ:

Ստորև ներկայացված են լուսանկարներ, որոնք արտացոլում են համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ դպրոցի համագործակցությունը:


ՕԳՏԱԿԱՐ Է

Պարբերաբար կազմակերպվում են մասնագիտական կողմնորոշման, տեղեկատվական ու կանխարգելիչ հանդիպում-միջոցառումներ: Կարևոր նշանակություն ունեն ճանաչողական էքսկուրսիաները:

Ակտիվ է դպրոցի կապը նաև կրթության կառավարման մարմինների, մասնավորապես՝ Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն հիմնադրամի, Գնահատման և թեստավորման կենտրոնի, «Դասավանդի՛ր Հայաստան» հիմնադրամի հետ: Դպրոցը նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված վերապատրաստում իրականացնող հաստատություն է 12 առարկաների գծով և տարեկան 60-120 ուսուցիչներ այստեղ վերապատրաստվելու հնարավորություն են ստանում:

Դպրոցն առանձնակի ակտիվ է ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան դպրոցների հետ համագործակցության բնագավառում: Օրինակ, «Այբ» հիմնադրամի, «Քվանտ» վարժարանի, ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոցի, ՀԱՊՀ քոլեջի, ԵՊԲՀ քոլեջի, «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի և մի շարք այլ հաստատությունների հետ համագործակցության արդյունքում սովորողները հաջողությամբ հանձնում են ընդունելության քննություններ ու ուսումը շարունակում են այդ ուսումնական հաստատություններում: Համագործակցություն է իրականացվում հետևյալ տեղական և միջազգային կազմակերպությունների հետ՝ ԿԶՆԱԿ, ԿՏԱԿ, ԴՇՀ, «Սյունիք զարգացում» ՀԿ, «Հույսի կամուրջ» ՀԿ, Քրիստոնեության դաստիարակության կենտրոն, «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի», Հույս և ապագա» ՀԿ, Հայկական կարմիր խաչ ընկերություն, GIZ-կենսաբազմազանության կայուն կառավարում, «Ալիանս Ֆրանսեզ» կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ, Յունիսեֆ, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, ОО «Россия», «Русский дом», Посольство РФ в РА, Московский культурно-деловой центр «Дом Москвы» в Ереване, Санкт-Петербургская академия постдипломного педагогического образования, ГБОУ средняя школа N259 имени Лориса Меликова г. Санкт-Петербурга.

Համայնքային հասարակական կազմակերպությունների հետ դպրոցը համագործակցում է տարբեր ուղղություններով՝ ներառելով ինչպես հասարակական

կազմակերպությունների նախաձեռնած միջոցառումներին, հանդիպումներին, ամառային ճամբարներին մասնակցություն, այնպես էլ մասնակցություն հետևյալ ծրագրերին, դասընթացներին, գիտաժողովներին և կլոր սեղաններին՝ «Հանրակարթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների 21-րդ դարի հմտությունների խթանում», «Մանկավարժական նախաձեռնություն», «Միջին դպրոցի ուսուցիչների վերապատրաստում», «Հայ դեռահասները հանուն էկոլոգիայի», «Հուշարձանները երիտասարդների աչքերով», «Մասնագիտական կողմնորոշման աշխատանքները հանրակրթական ոլորտում», Կրթական ծրագրերի իրականացման կենտրոն ԾԻԳ, «Կլիմայական արկղիկ», Կենսաբանության ուսուցիչների օլիմպիադա, «Ֆինանսական կրթությունը դպրոցում», «Ինտերակտիվ կրթության զարգացում Moodle, Edu Armenia 2020 /Ընթացիկ վեբինար սեմինարներ/, «Հեռավար ուսուցում և հեռավար գործիքներ, «Ուսուցիչների մեդիագրագիտության ամառային դպրոց, «Դպրոցի կառավարում», «Բազմաշերտ ուսումնական պլան», «Համագործակցային պլանավորում», «Դասալսման բարելավման ուղիները», «Երիտասարդները հանուն բարենպաստ կլիմայի», Դասագրքերի տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամ «Դասագրքաստեղծ աշխատանքներում ուսուցիչների մասնակցության ծրագիր», Межрегиональная научно-практическая конференция с международным участием «Методическое обеспечение профилактики правонарушений несовершеннолетних в деятельности социального педагога», «Ներառական կրթությունը Հայաստանում» /համընդհանուր ներառականություն/, «Կայուն սնունդ», Edu Armenia 2020 Հայաստան – Արցախ –Սփյուռք, «Պարադիգմա-2020», EdcamptArmenia 2020 /հանրակրթության բովանդակության փոփոխություն/, «Սանկտ Պետերբուրգ-Երևան-Եղեգնաձոր ժամանակակից մեթոդների կիրառումը ռուսաց լեզվի դասաժամերին» /օնլայն/:

Դպրոցի՝ համայնքի ու շահառու կազմակերպությունների հետ համագործակցության թույլ կողմերից են՝

- Համայնքային մակարդակում կրթական ու մարզամշակութային միջոցառումների սակավությունը,

- Մասնագիտական կողմնորոշման այցերի սակավությունը համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություններ,
- Թույլ զարգացած համագործակցություն արտասահմանյան կազմակեպությունների ու կառույցների հետ,
- Սովորողների կողմից ոչ մեծ ակտիվությունը կամավորական-հասարակական աշխատանքներում ներգրավվածության տեսանկյունից:

## 2.5 Հաստատության ուսումնական միջավայրը

Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոցում մշտապես առանձնակի հոգածություն է դրսևորվում բոլորի համար հասանելի ու արդյունավետ, ներառական ու մասնակցային ուսումնական միջավայր ստեղծելու հարցի նկատմամբ: Այս հարցն ինչպես նախորդ հնգամյակի, այնպես էլ 2023-2028թթ. զարգացման ծրագրերի առնցքային նպատակներից է: Հարմարավետ, հրապուրիչ, խրախուսող, մոտիվացնող ուսումնական միջավայրի միջոցով սովորողը դպրոցում պետք է ապահովված լինի ուսուցման և անձնային-մասնագիտական զարգացման, կրթվելու ու ինքնակրթվելու համար անհրաժեշտ ռեսուրսներով, մասնավորապես՝

1. Ուսուցիչների համար վերապատրաստումները, ատեստավորումը, ինքնակրթությունը, ուսուցման ժամանակակից մեթոդների յուրացումն ու կիրառումը պետք է առաջնահերթություն լինեն,
2. Դասասենյակները և առարկայական կաբինետները պետք է լինեն վերանորոգված ու պատշաճ կահավորված,
3. Դպրոցը ապահոված պետք է լինի դասագրքերով և ուսումնական այլ գրականությամբ, տեխնիկական ժամանակակից միջոցներով,

4. Դպրոցում պետք է ձևավորված լինեն հասարակական այնպիսի հարաբերություններ, որոնք համապատասխանում են երեխաների իրավունքներին և ժողովրդավարական դպրոցի գաղափարներին,

5. Դպրոցում պետք է ձևավորված լինեն սովորեցնելու և սովորելու, ներառականության, բազմակարծիք ու մասնակցային մոտեցման ավանդույթներ (մշակույթ),

6. Դպրոցում պետք է բացառված լինեն հալածանքը (բուլլինգ), օտարումը և բռնությունը:

Ծնողական համայնքի հետ հանդիպումները, ծնողական ու աշակերտական խորհուրդների հետ ունեցած քննարկումներն ու ներքին գնահատումները վկայում են մասին, որ սովորողների ուսումնառության ու ինքնադրսևորման համար դպրոցում առկա են վերոնշյալ պայմանները, տիրում է բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ, ծնողն ունի վստահության, իսկ սովորողը՝ պաշտպանվածության զգացում:

Դպրոցում ուսուցիչները սովորելու և ինքնակրթվելու լավագույն օրինակն են:

Դպրոցում առանձնակի ուշադրության է արժանանում սովորողների առողջության հարցը, որի դրսևորումներից են սանիտարահիգիենիկ պայմանների խիստ վերահսկողությունը, դպրոցական սննդի կազմակերպումը, ջեռուցման ժամանակահատվածում դպրոցի ջերմային ռեժիմի խիստ պահպանումը, 1-4-րդ դասարանի աշակերտների շրջանում սպորտլանդիաների կազմակերպումը, կյանքի հմտություններ և առողջ ապրելակերպ խմբակների ձևավորումը:

Խստորեն վերահսկվում են սովորողների բացակայությունները, դժվար դաստիարակվող սովորողները, նրանց առաջադիմությունը: Առաջադիմությամբ աչքի չընկնող սովորողների համար կազմակերպվում են երկարօրյա պարապմունքներ հատկապես նոր չափորոշիչներով աշխատող 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարանի աշակերտների համար հայոց լեզու, մաթեմատիկա և օտար լեզու առարկաներից: Ուսումնական գործընթացի անքակտելի մասն են կազմում ողջ տարվա ընթացքում կազմակերպվող առարկայական շաբաթները և ոչ ֆորմալ ծրագրերը, ֆլեշմոբերը, արտադասարանական խմբակները, ինչպիսիք են՝

- Հեքիաթն է կանչում /2-րդ դասարան/,
- Սովորում ենք ընթերցելով /3-րդ և 4-րդ դասարաններ/,
- Սպորտլանդիաներ /1-4-րդ դասարաններ/,
- Ազգային երգ ու պար/5-7րդ դասարաններ/,
- Կյանքի հմտություններ /5-րդ դասարան/,
- Առողջ ապրելակերպ/ 5, 7-րդ դասարաններ/
- Շախմատ /5-9-րդ դասարաններ/,
- Պատանի մաթեմատիկոս /5-9րդ դասարաններ/,
- Աշխարհագրություն /7-9րդ դասարաններ/,
- Ֆիզիկա /7—9 –րդ դասարաններ /,
- Բանավեճի ակումբ /7—9 –րդ դասարաններ /,
- Հայկական հարցի պատմություն /9-րդ դասարան/,
- Մարզական խաղեր /7—9 –րդ դասարաններ /,
- Մասնագիտական կողմնորոշում /8-9-րդ դասարաններ/:

Նոր չափորոշիչներով դպրոցում պարտադիր է դառնում նախագծային ուսուցումը, որի հիմնական նպատակը սովորողներին գործնական խնդիրների կամ առաջադրանքների լուծման գործընթացում ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելն է տարբեր առարկաներից գիտելիքների ինտեգրման միջոցով: Այստեղ ուսուցիչը ստանձնում է մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի դեր: Սա նշանակում է, որ նախագծային մեթոդի հիմքում ընկած է սովորողի ճանաչողական հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, տեղեկատվական դաշտում կողմնորոշվելու, քննադատական ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումը: Նախագծային աշխատանքը նպաստում է աշակերտների համար բազմակարծիք, մասնակցային միջավայրի ձևավորմանը:

Այս տեսանկյունից հատկապես կարևորվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար հավասար պայմանների ու

հարմարեցված միջավայրի ապահովումը, կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումը: Ժամանակի հրամայական է դարձել նաև Արցախից տեղահանված մեր հայենակիցների կրթության իրավունքի պատշաճ ապահովումը, որը ևս ներառվել է դպրոցի զարգացման ծրագրում:

Պետության կրթական քաղաքականության կարևորագույն խնդիրներից է դաստիարակությունը, որը դպրոցում կազմակերպվում է ինչպես ծնողների հետ համագործակցության, այնպես էլ դասարանական ու արտադասարանական զանազան միջոցառումների միջոցով:

Նկարագրված ուսումնական միջավայրը զարգացնելու և կատարելագործելու նպատակով դպրոցի 2023-2028թթ. զարգացման ծրագրում պլանավորված են մի շարք քայլեր, որոնք նաև ուղղված են այս ոլորտի հետևյալ թույլ կողմերի հաղթահարմանը, մասնավորապես՝

- Յուրաքանչյուր սովորողի համար հավասար հնարավորությունների ստեղծմանն ուղղված շարունակական աշխատանք,
- Կրթական ծրագրերի մատչելիության ապահովում՝ հատկապես նոր ներդրվող չափորոշիչների, գնահատման համակարգի ու դասագրքերի փոփոխությունը նկատի առնելով,
- Ուսուցիչների շարունակական կրթության ու վերապատրաստումների ապահովում:

Ուսումնական միջավայրի հետ կապված հաստատության թույլ կողմերն են՝

- Նոր ներդրվող չափորոշիչների, գնահատման համակարգի և դասագրքերի հետ կապված փորձառության պակասը,
- Փորձառության պակասը նախագծային աշխատանքներ վարելիս:

## 2.6 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումները

«ՀՀ Վայոց ձորի մարզի Հովհաննես Հովհաննիսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցում» աշխատում են 53 մանկավարժներ: Բոլորն ունեն բարձրագույն կրթություն և 5 ու ավելի տարիների մանկավարժական աշխատանքային փորձ: Դպրոցում խրախուսվել և խրախուսվելու են կրթության և մանկավարժության բնագավառներում հաջողություններ ձեռք բերած ուսուցիչները:

Շարունակական վերապատրաստումները, պարտադիր ու կամավոր ատեստավորումը դպրոցի մանկավարժական համակազմի համար բնականոն աշխատանքային գործընթացի մաս են կազմում: Այսպես՝

- Ուսումնական հաստատությունը հերթական ատեստավորման ենթակա ուսուցչին վերապատրաստող երաշխավորված կազմակերպություն է, 10 ուսուցիչ հանդիսանում է վերապատրաստող,
- Շատ ուսուցիչներ հանդիսանում են դպրոցականների առարկայական օլիմպիադաների մարզային փուլի հանձնաժողովների նախագահներ,
- 6 ուսուցիչ ընգրկված է ԴՇՀ-ի կողմից իրականացվող «Դասագրքաստեղծման աշխատանքներում ուսուցիչների մասնակցության ծրագրում»,
- 2 ուսուցիչ մասնակցել է 2-րդ, 5-րդ, 7-րդ, 10-րդ դասարաններում դասավանդվող հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման մրցույթին ներկայացվող դասագրքերի փորձաքննությանը,
- «Հույս և ապագա» երեխաների աջակցության և զարգացման բարեգործական հասարակական կազմակերպության շրջանակներում դպրոցի տնօրենն իրականացնում է հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք / հասվաստագիր/ ստանալու համար վերապատրաստման դասընթացներ,

- Դպրոցում աշխատում են ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք /հավաստագիր/ ունեցող ուսուցիչներ,
- 1 ուսուցիչ մասնակցում է ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպված օտար լեզուների 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում գնահատման բնութագրիչների մշակման աշխատանքներին,
- Դպրոցում աշխատում են կառավարական բարձր պարգևների արժանացած ուսուցիչներ,
- Կան կամավոր ատեստավորում անցած և հավելավճար ստացող 6 ուսուցիչներ,
- 2 ուսուցիչ հանդիսանում են ՀՄԿ-ի կողմից իրականացվող «Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ծրագրի» մենթորներ,
- Դպրոցում աշխատում են տարակարգ ունեցող 5 ուսուցիչներ,
- Միջազգային վերապատրաստումներ անցած ուսուցիչներ,
- Հանրապետական մրցույթներում հաղթած ուսուցիչներ,
- Բոլորը մշտապես պատրաստ են իրենց լավագույն փորձով ու խորհուրդներով կիսվել երիտասարդ գործընկերների հետ:

Մշտապես խրախուսվում է ուսուցչի թափուր տեղերը սահմանված կարգով համալրելու նպատակով համապատասխան որակավորում և աշխատանքային փորձ ունեցող մասնագետ-մանկավարժների մասնակցությունը մրցութային գործընթացին, նոր ընտրված մասնագետների հետ մշտական ու հետևողական աշխատանք է իրականացվում մասնագիտական զարգացմանը նպաստող խորհրդատվությունների տեսքով: Շարունակական աշխատանք է տարվում նաև մանկավարժների կողմից ժամանակակից տեխնիկական միջոցների կիրառմամբ մոտիվացնող ու հետաքրքիր, բազմաբովանդակ ուսումնական նյութեր պատրաստելու ուղղությամբ:

Դպրոցում մշտական բնույթ են կրում փոխադարձ դասալսումները, բաց դասերը, դաս-միջոցառումները:

Վերլուծելով հաստատությունում աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունները, կարող ենք արձանագրել հետևյալը.

1.Դպրոցում արժևորվում և խրախուսվում են՝

- անհրաժեշտ որակավորում, աշխատանքային փորձ ունեցող և իրենց աշխատանքին նվիրված մանկավարժ-մասնագետները,

- բարձր պատասխանատվություն և նվիրվածություն դրսևորող աշխատակիցները,

- աշակերտակենտրոն մոտեցումներ դրսևորող, սովորողների հաջողությունը կարևորող և գնահատող մանկավարժ-մասնագետները,

- ուսուցիչների համագործակցությունը, փորձի փոխանակումը, ինտեգրված դասերի թեմատիկ միավորների ստեղծումը,

- ուսուցիչների ստեղծագործական նախաձեռնությունները,

- մասնագիտական պատրաստվածության մակարդակի բարձրացմանն ուղղված դասընթացներին մասնակցելը, ինքնակրթությունը:

Որպես թույլ կողմ՝ կարելի է առանձնացնել՝

- Մանկավարժների հետազոտական, ստեղծագործական աշխատանքի, կամավոր ատեստավորմանը մասնակցելու մոտիվացիայի պակաս,
- Նախագծային աշխատանքներ իրականացնելու փորձի պակաս;
- Հանրակրթության նոր չափորոշչի ներդրման հետ կապված որոշակի դժվարություններ:

## 2.7 Հաստատության տրամադրած կրթության որակը

Դպրոցի գործունեության ու գործառնության տեսլականը որակյալ, ժամանակակից պահանջներին համապատասխան ու համահունչ կրթության տրամադրումն է: Բոլոր քայլերն ու ծրագրերը, դպրոցի զարգացման հնգամյա, տարեկան աշխատանքային պլանները, ներդպրոցական վերահսկողությունն ու հաշվետվությունները միտված են միևնույն վերջնանպատակին: Այդ վերջնանպատակին հասնելու համար դպրոցը լուրջ և հետևողական աշխատանք է իրականացնում ոչ միայն հանրակրթական ծրագրով, այլև երկարօրյա պարապմունքների, առանձին խմբակների, ոչ ֆորմալ կրթական գործիքակազմի կիրառմամբ ուսման որակը և սովորողների կարողունակությունները, գիտելիքների անհրաժեշտ ծավալը ապահովելու, նրանց արժեհամակարգը ձևավորելու համար: Այդ են վկայում սովորողների գիտելիքների ստուգման արդյունքները, առարկաների մեծ մասի տարեկան միջին և քննական գնահատականները, միջազգային ու տեղական հեղինակավոր ավագ դպրոցների ընդունելության քննությունների արդյունքները:

Դպրոցի կրթության որակի առավել վստահելի ցուցանիշներից կարելի է նշել աշակերտների մասնակցությունն առարկայական օլիմպիադաներին, մշակութային, սպորտային, դպրոցական, համայնքային, մարզային, հանրապետական, միջազգային միջոցառումներին, մրցույթներին, ցուցահանդեսներին, փառատոններին, որտեղ նրանք զբաղեցնում են մրցանակային տեղեր՝ նպաստելով դպրոցի հեղինակության բարձրացմանը:

Որակյալ կրթության ապահովումը շարունակական ու հետևողական աշխատանք է պահանջում, ուստի անհրաժեշտ է մշակել սովորողների առաջադիմությանը հետևող մշտադիտարկման աշխատանքային պլաններ, հատկորոշիչ ստուգողական աշխատանքների ժամանակացույցեր և վերլուծել ստացված արդյունքները՝ ցանկալի վերջնարդյունքը գրանցելու համար:

Որակյալ կրթությանը զուգահեռ՝ դպրոցում մեծ ուշադրություն է դարձվում ռազմահայրենասիրական դաստիարակությանը, ազգային ու համամարդկային արժեքների

ամրապնդմանը, սովորողների ստեղծագործական կարողությունների, քննադատական ու վերլուծական մտածողության բացահայտմանը:

Շարունակաբար կազմակերպվում են դասարանական, արտադասարանական ու արտադպրոցական նպատակային միջոցառումներ, այցեր թանգարաններ, գրադարան: Նմանատիպ այցերը էապես ազդում են սովորողի հոգեկերտվածքի ձևավորման ու զարգացման վրա:

Ուսումնական հաստատությունում գործում է աշակերտական խորհուրդ, որը պարբերաբար հանդես է գալիս տարբեր առաջարկություններով, իրականացնում է համադպրոցական հերթապահություն, կազմակերպում է հանդիպումներ, տարաբնույթ ճանաչողական այցեր, համապատասխան լուծումներ է տալիս ստեղծված խնդիրներին:

Ուսումնական հաստատությունում, ըստ սովորողների նախասիրությունների ձևավորվել և գործում են տարբեր խմբակներ, իրականացվում են ուսումնական նախագծեր: Ամեն տարի հունիս ամսին ցածր առաջադիմություն ցուցաբերած սովորողների համար գործում է «Ամառային դպրոց»: Սովորողները կարողանում են հաղորդակցվել առնվազն երկու օտար լեզվով:

Դպրոցը սահմանել է Բենիկ Ավետիսյանի անվան կրթաթոշակ, որով պարգևատրվում են դպրոցի օժտված, լավագույն աշակերտները:

Խրախուսական մրցանակ է սահմանվում տվյալ ուսումնական տարվա լավագույն դասարանի համար:

Կրթության որակի բարձրացմանը զուգահեռ ընդգծված ուշադրության կենտրոնում է ԿԱՊԿՈՒ աշակերտների հավասար կրթության ապահովումը, որի ցուցիչն է ԿԱՊԿՈՒ սովորողների ինտեգրումը:

Դպրոցում կրթության որակի թույլ կողմերից են՝

- Ներքին և արտաքին գնահատման արդյունքում արձանագրվում է սովորողների գիտելիքների պակաս,
- Միջազգային օլիմպիադաներին մասնակցության պասիվություն,

- Միջին դպրոցում որոշակի անտարբերություն: Սովորողները թերանում են պարտականությունների կատարման մեջ, երբեմն չեն դրսևորում փոխըմբռնում ինչպես տարեկիցների, այնպես էլ մեծահասակների և փոքրերի հանդեպ,
- Միջին դպրոցի սովորողների մոտ նկատվում է ընթերցանության պակաս:

## 2.8 Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաները և կիրառվող նորարարությունները

Ժամանակի հրամայական պահանջներից մեկը կյանքի բոլոր բնագավառներում տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց քայլելն է, և դպրոցն այս առումով այն առաջամարտիկներից մեկն է, որը հնարավորինս արագ պետք է արձագանքի այդ բնագավառի նորարարություններին՝ մի կողմից յուրացնելով դրանք, մյուս կողմից ինտեգրելով դրանք ուսուցման կազմակերպման գործընթացի մեջ:

Դպրոցում ուսումնական գործընթացի կազմակերպման տարբեր փուլերում ՏՀՏ-ների կիրառումն ուղղակի անհրաժեշտություն է, մասնավորապես փաստաթղթաշրջանառության մեծ մասը կատարվում է էլեկտրոնային եղանակով, սովորողներին գնահատելու համար կիարառվում են emis.am էլեկտրոնային մատյանները, բազմաբնույթ արդյունավետ ու օգտակար կրթական ռեսուրսներ հասանելի են «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ **ktak.am**, «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի՝ **kznakhimnadram.blogspot.com,** «Հայկական կրթական միջավայր» պորտալի՝ **armedu.am**, «Պաշարների շտեմարան»՝ **lib.armedu.am,** «Հեռավար ուսուցում» համակարգի՝ **learning.armedu.am,** «Ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաներ»՝ **esource.armedu.am կայքերը:**

Դպրոցը զինված է համակարգչային լսարանով, որտեղ տեղակայված են 19 համակարգիչներ, դպրոցն ունի ինտերնետ կապ, հագեցած է պրոյեկտորներով, տպիչներով, էլեկտրոնային գրատախտակով (2 հատ), Smart հեռուստացույցով (3 հատ):

Դպրոցում մեծ ուշադրություն է դարձվում ուսուցիչների՝ տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու կարողությունները զարգացնելուն, դասապրոցեսում ՏՀՏ-ների կիրառմամբ բաղադրիչներ ներառելուն: Այն օգնում է՝

- ✓ մոտիվացնել սովորողներին,
- ✓ բարձրացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը,
- ✓ նպաստել սովորողների ճանաչողական կարողությունների զարգացմանը,
- ✓ օգտագործել այն իբրև ինքնակրթության միջոց,
- ✓ նպաստել մեդիագրագիտության զարգացմանը,
- ✓ բարձրացնել հետաքրքրվածությունը,
- ✓ ստանալ անձնական պահանջմունքներին ու հետաքրքրություններին համապատասխան գիտելիքներ և այլն:

Այս տեսանկյունից դպրոցի թույլ կողմերից են՝

- Էլեկտրոնային գրատախտակների սակավությունը,
- Վերազինվելու կարիք ունեցող համակարգչային լսարանը:

Ստորև ներկայացված են լուսանկարներ բաց դասերից, նախագծային աշխատանքներից, վերապատրաստումներից:



## 2.9 Հաստատության ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները (ամփոփ վերլուծություն)

Ցանկացած բանզավառում զարգացման ռազմավարության մշակման հիմքում դրվում է այդ բնագավառի, ոլորտի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների ու վտանգների, այսպես կոչված, SWOT վերլուծությունը:

Ելնելով «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի Հովհաննես Հովհաննիսյան անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի՝ տարբեր ոլորտների նկարագրությունից, առկա խնդիրներից՝ ստորև ներկայացվում է հաստատության ՈՒԹՀՎ (SWOT) վերլուծությունը:

| 1. Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան | |
|---|---|
| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
| • Անվտանգության ու շահագործման նորմատիվներին համապատասխանող և հարմարեցված շենքային պայմաններ:<br>• Վերանորոգված և սանիտարական նորմերին համապատասխանեցված ու հենաշարժողական խնդիրներ ունեցող աշակերտների պահանջներին հարմարեցված սանհանգույցներ: | • Նյութատեխնիկական բազայի համալրում նոր՝ ժամանակակից սարքավորումներով, համակարգչային տեխնիկայով,<br>• Առարկայական կաբինետների, լաբորատոր սենյակների առանձնացում ու կահավորում,<br>• Սպորտհրապարակի բարեկարգում,<br>• Դպրոցի շենքի հիմնանորոգում կամ նոր մասնաշենքի կառուցում: |
| ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ | ՎՏԱՆԳՆԵՐ/ՌԻՍԿԵՐ |

| | |
|---|---|
| • Դպրոցն աշխատում է գերբեռնված, կարիք կա նոր մասնաշենքի,<br>• Առկա մասնաշենքը վերանորոգման, թարմացման կարիք ունի,<br>• Որոշ դասասենյակների մակերեսը չի համապատասխանում սահմանված ստանդարտներին,<br>• Չկան առարկայական կաբինետներ, առկա նյութատեխնիկական ռեսուրսների մի մասը նորով փոխարինման կարիք ունի,<br>• Հատկապես բնագիտական առարկաների գործնական պարապմունքների իրականացման համար առկա չեն լաբորատոր սարքավորումներ, ինչը խոչընդոտում է ուսումնական գործընթացի արդյունավետությանը,<br>• Բաց մարզահրապարակը կարիք ունի վերանորոգման: | ➢ Ոչ բավարար ֆինանսական միջոցների մուտք դպրոց այլ աղբյուրներից՝ ներառյալ դրամաշնորհներ, համայնքի, բարերարների կողմից աջակցություն և այլն: |

| 2. Հաստատության ֆինանսատնտեսական գործունեությունը | |
|---|---|
| **ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ** | **ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** |
| • Աշակերտների թվի կայուն աճի շնորհիվ ֆինանսական բավարար հոսքերի ապահովում,<br>• Հստակ ու թափանցիկ, նպատակային ու արդյունավետ գործունեություն,<br>• Ուսումնական տարվա մեկնարկ ոչ միայն առանց պարտքերի, այլև զգալի խնայողություններով: | • արտաբյուջետային միջոցների ստեղծումը,<br>• նոր համագործակցությունների, դրամաշնորհների միջոցով դպրոցի նյութատեխնիկական բազայի հարստացումն ու վերազինումը,<br>• դպրոցի և սպորտհրապարակի վերանորոգման համար միջոցներ որոնելը |
| **ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ** | **ՎՏԱՆԳՆԵՐ/ՌԻՍԿԵՐ** |
| • արտաբյուջեի բացակայությունը,<br>• նոր համագործակցությունների, դրամաշնորհների սակավությունը,<br>• դպրոցի և սպորտհրապարակի վերանորոգման համար անհրաժեշտ միջոցների բացակայությունը: | ➢ Պետական բյուջեից ստացվող ֆինանսական միջոցների փոխանցման հետ կապված ուշացումներ, չեղարկումներ,<br>➢ Նոր համագործակցությունների բացակայություն, դրամաշնորհային ծրագրերի հայտերի մերժում: |

| 3. Հաստատության կառավարման ու խորհրդակցական մարմինները | |
|---|---|
| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
| • Կառավարման խորհրդի, խորհրդակցական մարմինների արդյունավետ գործունեություն՝ ի նպաստ դպրոցի զարգացման,<br>• Ծնողական խորհրդի աջակցություն ուսումնադաստիարակչական աշխատանքներին,<br>• Աշակերտական խորհրդի ակտիվ ներգրավվածություն արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներում | • Շրջանավարտների խորհրդի ստեղծում<br>• Ծնողական խորհրդի հետ համագործակցության բարելավում, փոխադարձ վստահության ձեռքբերում<br>• Ծնողական խորհրդի ընդգրկում ուսման կարևորագույն գործառույթներում,<br>• Աշակերտական խորհրդի ակտիվացում և ներգրավում դպրոցի համար կարևոր նշանակություն ունեցող գործընթացներում |
| ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ | ՎՏԱՆԳՆԵՐ/ՌԻՍԿԵՐ |
| • Դպրոցի ծնողական խորհուրդի ոչ շատ ակտիվությունը իրեն հասանելի նախաձեռնությունների շրջանակում,<br>• Աշակերտական խորհրդի ոչ շատ ակտիվ ու նախաձեռնող լինելը:<br>• Շրջանավարտների խորհրդի ձևավորված չլինելը | ➢ Շրջանավարտների, աշակերտների ու ծնողների ցածր մոտիվացիա |

## 4. Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|
| • Պետական ու համայնքային կառույցների հետ մշտական աշխատանք և համագործակցություն,<br>• Համայնքային խնդիրների ուսումնասիրություն և վերհանում դպրոցում նախագծային աշխատանքների, քննարկումների միջոցով,<br>• Նախադպրոցական ուսումնական հաստատությունների, հարակից ուսումնական հաստատությունների՝ արվեստի ու երաժշտական դպրոցների, ավագ դպրոցների, մասնագիտացված ուսումնական հաստատությունների, գրադարանի հետ համագործակցություն,<br>• Հանդիպումներ գործարար միջավայրի ներկայացուցիչների, ոստիկանության, Արտակարգ իրավիճակների, Պաշտպանության նախարարության մարզային կառույցների հետ,<br>• Ճանաչողական էքսկուրսիաների | • Սովորողների հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացում,<br>• Համագործակցությունների շրջանակի ընդլայնում մասնավորապես մասնագիտական կողմնորոշման այցերի ակտիվացման միջոցով,<br>• Կամավորության խթանում |

| | |
|---|---|
| կազմակերպում,<br>• Ակտիվ կապ կրթության կառավարման մարմինների հետ՝ ԿԶՆԱԿ, ԳԹԿ և այլն,<br>• Համագործակցություն ՀԿ-ների հետ, դրամաշնորհային մրցույթներին մասնակցություն: | |
| **ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ** | **ՎՏԱՆԳՆԵՐ/ՌԻՍԿԵՐ** |
| • Համայնքային մակարդակում կրթական ու մարզամշակութային միջոցառումների սակավությունը,<br>• Մասնագիտական կողմնորոշման այցերի սակավությունը համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություններ,<br>• Թույլ զարգացած համագործակցություն արտասահմանյան կազմակեպությունների ու կառույցների հետ,<br>• Սովորողների կողմից ոչ մեծ ակտիվությունը կամավորական-հասարակական աշխատանքներում ներգրավվածության տեսանկյունից: | ➢ Մոտիվացիայի պակաս սովորողների ու ուսուցիչների մոտ՝ ակտիվ ներառվելու համայնքային տարբեր կառույցների հետ համագործակցություններում,<br>➢ Այլ կառույցների կողմից դպրոցի հետ համագործակցելու մոտիվացիայի պակաս: |

| 5. Ուսումնական միջավայրը | |
|---|---|
| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
| • Ուսուցիչների համար վերապատրաստումները, ատեստավորումը, ինքնակրթությունը, ուսուցման ժամանակակից մեթոդների յուրացումն ու կիրառումը առաջնահերթություն են,<br>• Վերանորոգված ու պատշաճ կահավորված դասասենյակներ և առարկայական կաբինետներ,<br>• Դասագրքերով և ուսումնական այլ գրականությամբ, տեխնիկական ժամանակակից միջոցներով կահավորված դպրոց,<br>• Երեխաների իրավունքներին և ժողովրդավարական դպրոցի գաղափարներին համապատասխանող հարաբերություններ,<br>• Հալածանքի (բուլլինգ), օտարման և բռնության բացառում,<br>• Սանիտարահիգիենիկ պայմանների խիստ վերահսկողություն,<br>• Բացակայությունների խիստ վերահսկողություն,<br>• Երկարօրյա պարապմունքներ | • Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնակառությանը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական զարգացում,<br>• Կրթական ծրագրերի մատչելիության ապահովում՝ հատկապես նոր ներդրվող չափորոշիչների, գնահատման համակարգի ու դասագրքերի փոփոխությունը նկատի առնելով,<br>• Ուսուցիչների շարունակական կրթության ու վերապատրաստումների ապահովում: |

| | |
|---|---|
| առաջադիմությամբ աչքի չընկնող սովորողների համար,<br>• Արտադասարանական խմբակներ,<br>• Նախագծային ուսուցում,<br>• Հավասար պայմանների և հարմարեցված միջավայրի, հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովում ԿԱՊԿՈՒ սովորողների համար: | |
| **ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ** | **ՎՏԱՆԳՆԵՐ/ՌԻՍԿԵՐ** |
| • Նոր ներդրվող չափորոշիչների, գնահատման համակարգի և դասագրքերի հետ կապված փորձառության պակաս,<br>• Փորձառության պակաս նախագծային աշխատանքներ վարելիս: | ➢ նոր ներդրվող չափորոշիչների, գնահատման համակարգի ու դասագրքերի փոփոխության հետ կապված ռիսկեր,<br>➢ Մոտիվացիայի պակաս |

| 6. Մանկավարժական համակազմ | |
|---|---|
| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
| • Կրթության ու մանկավարժության բնագավառում հաջողություններ ձեռք բերած ուսուցիչների շարունակական խրախուսում,<br>• Շարունակական վերապատրաստումները, կամավոր ու պարտադիր ատեստավորումները՝ դպրոցի մանկավարժական համակազմի բնականոն աշխատանքային գործընթացի մաս,<br>• Մշտական ու հետևողական աշխատանք նոր ընտրված մասնագետների հետ մասնագիտական զարգացմանը նպաստող խորհրդատվությունների տեսքով,<br>• Շարունակական աշխատանք ՏՀՏ-ների կիրառմամբ մոտիվացնող ու հետաքրքիր, բազմաբովանդակ ուսումնական նյութեր պատրաստելու ուղղությամբ: | • Ուսուցիչների իրավական կարգավիճակի հստակեցում, աշխատանքի վարձատրության, խրախուսման մեխանիզմների բարելավում,<br>• Մանկավարժներին նորարարական գիտելիքներով զինելու նպատակով մանկավարժական գիտական հետազոտությունների խթանում,<br>• Մեթոդական աշխատանքների արդյունքների վերաբերյալ նյութերի ստեղծում, մշակում, ներկայացում, տպագրություն:<br>• Տարբեր դասարաններում նախագծային աշխատանքների իրականացման խթանում,<br>• Հանրակրթության նոր չափորոշչի ներդրման հետ կապված դժվարություններ ունեցող ուսուցիչներին պարբերական աջակցության տրամադրում,<br>• մասնակցություն տարբեր ձևաչափերով իրականացվող դասընթացներին և վերապատրաստումներին: |

| ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ | ՎՏԱՆԳՆԵՐ/ՌԻՍԿԵՐ |
| --- | --- |
| • Մանկավարժների հետազոտական, ստեղծագործական աշխատանքի, կամավոր ատեստավորմանը մասնակցելու մոտիվացիայի պակաս,<br>• Նախագծային աշխատանքներ իրականացնելու փորձի պակաս;<br>• Հանրակրթության նոր չափորոշչի ներդրման հետ կապված փորձի պակաս: | ➢ Ինքնակրթության մոտիվացիայի պակաս,<br>➢ Նոր չափորոշիչի, գնահատման համակարգի ու նոր դասագրքերի կիրառման հետ կապված դժվարություններ: |

| 7. Աշակերտական համակազմ և կրթության որակ | |
| --- | --- |
| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
| • Սովորողների առաջադիմությանը հետևող մշտադիտարկման աշխատանքային պլաններ, հատկորոշիչ ստուգողական աշխատանքների ժամանակացույցեր ու ստացված արդյունքների վերլուծություն,<br>• Միջազգային ու տեղական մրցույթների, օլիմպիադաների մասնակցություն ու մրցանակային տեղեր,<br>• Ռազմահայրենասիրական դաստիարակության, ազգային ու համամարդկային արժեքների | • Համապատասխան աշխատանքների իրականացում կրթության որակը բարձրացնելու նպատակով,<br>• Սովորողների ստեղծագործական աշխատանքի, վերլուծական, քննադատական մտածողության խթանում,<br>• Գիտելիքների ինքնուրույն ձեռքբերմանը, արժեքային համակարգի և դիրքորոշման ձևավորմանն աջակցում,<br>• Բարձրորակ կրթության, առարկայական օլիմպիադաներում բարձր ցուցանիշների |

| | |
|---|---|
| ամրապնդում,<br>• Ստեղծագործական կարողությունների, քննադատական ու վերլուծական մտածողության խթանում,<br>• Ամառային դպրոցներ,<br>• Օժտված, լավագույն աշակերտների պարգևատրում Բ. Ավետիսյանի անվան կրթաթոշակով,<br>• ԿԱՊԿՈՒ սովորողնորի համար հավասար պայմանների և հնարավորությունների ապահովում: | ապահովում,<br>• Սովորողների մասնագիտական կողմնորոշմանը միտված միջոցառումների ընդլայնում,<br>• Օտար լեզուների խորացում, ցանկի ընդլայնում,<br>• Հայրենասեր, մարդասեր, բարոյական բարձր հատկանիշներ և ապագայի նկատմամբ հավատ ունեցող անհատի ձևավորման նպաստում:<br>• Դպրոցի գրադարանային ֆոնդի համալրում:<br>• Ընդարձակ ընթերցասրահի ստեղծում:<br>• Մարզային գրադարանի հետ կապի ամրապնդում: |
| **ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ** | **ՎՏԱՆԳՆԵՐ/ՌԻՍԿԵՐ** |
| • Ներքին և արտաքին գնահատման արդյունքում արձանագրվում է սովորողների գիտելիքների պակաս:<br>• Միջազգային օլիմպիադաներին պասիվությունը,<br>• Միջին դպրոցի վերջին դասարաններում անտարբերությունը: Սովորողները թերանում են պարտականությունների կատարման մեջ, երբեմն չեն դրսևորում փոխըմբռնում ինչպես | ➢ Սովորողների մոտ մոտիվացիայի ու նախաձեռնողականության պակաս |

| | |
|---|---|
| տարեկիցների, այնպես էլ մեծահասակների և փոքրերի հանդեպ,<br>• Միջին դպրոցի սովորողների մոտ նկատվում է ընթերցանության պակաս: | |

| 8. Տեխնոլոգիաներ և նորարարություն | |
|---|---|
| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
| • Դպրոցի փաստաթղթաշրջանառությունը ՏՀՏ-ների միջոցով,<br>• Կրթական ռեսուրսների օգտագործում էլեկտրոնային համապատասխան հարթակներից՝ ktak.am, kznakhimnadram.blogspot.am, armedu.am, lib.armedu.am, esource.armedu.am և այլն:<br>• Համակարգչային լսարանի առկայություն,<br>• Համապատասխան միջոցների՝ ինտերնետ, տպիչներ, էլեկտրոնային գրատախտակ, պրոյեկտոր, առկայություն, | • Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդրում դասապրոցեսում,<br>• Ուսուցիչների մասնագիտական որակների շարունակական բարելավում և արդիականացում,<br>• Մեդիագրագիտության մակարդակի բարելավում,<br>• Մենթորական համակարգի ներդրում,<br>• Դպրոցում աշխատանքային անկյունի ստեղծում,<br>• Ըստ անհրաժեշտության անցում |

| | |
|---|---|
| • Դասապրոցեսում ՏՀՏ-ների կիրառում: | հեռավար ուսուցման: |
| **ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ** | **ՎՏԱՆԳՆԵՐ/ՌԻՍԿԵՐ** |
| • Էլեկտրոնային գրատախտակների սակավություն,<br>• Վերազինվելու կարիք ունեցող համակարգչային լսարան,<br>• Տանը համակարգչով աշխատելու հնարավորություն չունեցող սովորողների ու ուսուցիչների համար դպրոցում աշխատանքային անկյունի բացակայություն: | ➢ Ժամանակի պահանջներին համահունչ տեխնիկական միջոցներով դպրոցը չհագեցնելը: |

## 3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Եղեգնաձորի թիվ 2 հինական դպրոցը, ինչպես վերը նկարագրվեց, ունի բավարար շենքային պայմաններ, նյութատեխնիկական բազա ու ռեսուրսներ, արդյունավետ գործառնող կառավարման ու խորհրդակցական մարմիններ, մանկավարժական համակազմ, կրթության բարձր որակն ապահովող ուսումնական միջավայր և տարբեր կառույցների հետ համագործակցության փորձառություն՝ կազմակերպելու կրթական գործընթացը, իրականացնելու իր կարևորագույն առաքելությունը՝ նպաստել սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքի, մասնագիտական կողմնորոշման և մասնագիտական կրթության նախապատրաստմանը:

Միևնույն ժամանակ, հաստատությունում առկա են նաև ոլորտային մի շարք խնդիրներ, որոնց լուծմանն է ուղղված 2023-2028թթ. զարգացման ծրագիրը:

**«ՀՀ Վայոց ձորի Եղեգնաձորի Հովհաննես Հովհաննիսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցի» զարգացման ծրագրի նպատակը դպրոցի շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի բարելավման, ֆինանսատնտեսական արդյունավետ գործունեության, զանազան համագործակցությունների, մանկավարժական համակազմի կարողությունների հզորացման միջոցով սովորողների կրթական կարիքները բավարարող կրթական այնպիսի միջավայրի ապահովումն է, որը համապատասխանում է ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականությանը, հանրակրթական պետական չափորոշչային պահանջներին:**

Ըստ ոլորտների՝ կարելի է առանձնացնել հետևյալ խնդիրները.

| Հh | Ոլորտը | Խնդիրը |
|---|---|---|

| | | |
|---|---|---|
| **1** | Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան | • Նոր մասնաշենքի կառուցում<br>• Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական միջավայրի հարստացում<br>• Նյութատեխնիկական բազայի համալրում նոր՝ ժամանակակից սարքավորումներով, համակարգչային տեխնիկայով |
| **2** | Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը | • Արտաբյուջետային նոր միջոցների ստեղծում և ավելացում<br>• Դպրոցի հիմնական մասնաշենքի և սպորտհրապարակի վերանորոգում |
| **3** | Կառավարման և խորհրդակցական մարմիններ | • Շրջանավարտների խորհրդի ստեղծում<br>• Ծնողական խորհրդի հետ համագործակցության բարելավում, փոխադարձ վստահության ձեռքբերում<br>• Ծնողական խորհրդի ընդգրկում ուսման կարևորագույն գործառույթներում<br>• Աշակերտական խորհրդի ակտիվացում և ներգրավում դպրոցի համար կարևոր նշանակություն ունեցող գործընթացներում |
| **4** | Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ | • Սովորողների հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացում<br>• Համագործակցությունների շրջանակի ընդլայնում մասնավորապես մասնագիտական կողմնորոշման այցերի ակտիվացման միջոցով<br>• Կամավորության խթանում |
| **5** | Ուսումնական միջավայրը | • Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, բազմակարծիք ու ներառական, մասնակցային միջավայրի, ժամանցն |

| | | |
|---|---|---|
| | | ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական զարգացում<br>• Կրթական ծրագրերի մատչելիության ապահովում՝ հատկապես նոր ներդրվող չափորոշիչների, գնահատման համակարգի ու դասագրքերի փոփոխությունը նկատի առնելով<br>• Ուսուցիչների շարունակական կրթության ու վերապատրաստումների ապահովում: |
| 6 | Մանկավարժական համակազմ | • Ուսուցիչների իրավական կարգավիճակի հստակեցում, աշխատանքի վարձատրության, խրախուսման մեխանիզմների բարելավում<br>• Մանկավարժներին նորարարական գիտելիքներով զինելու նպատակով մանկավարժական գիտական հետազոտությունների խթանում<br>• Մեթոդական աշխատանքների արդյունքների վերաբերյալ նյութերի ստեղծում, մշակում, ներկայացում, տպագրություն:<br>• Տարբեր դասարաններում նախագծային աշխատանքների իրականացման խթանում<br>• Հանրակրթության նոր չափորոշչի ներդրման հետ կապված դժվարություններ ունեցող ուսուցիչներին պարբերական աջակցության տրամադրում<br>• մասնակցություն տարբեր ձևաչափերով իրականացվող դասընթացներին և վերապատրաստումներին: |

| | | |
|---|---|---|
| **7** | Աշակերտական համակազմ և կրթության որակը | • Համապատասխան աշխատանքներ իրականացում կրթության որակը բարձրացնելու նպատակով<br>• Սովորողների ստեղծագործական աշխատանքի, վերլուծական, քննադատական մտածողության խթանում<br>• Գիտելիքների ինքնուրույն ձեռքբերմանը, արժեքային համակարգի և դիրքորոշման ձևավորմանն աջակցում<br>• Բարձրորակ կրթության, առարկայական օլիմպիադաներում բարձր ցուցանիշների ապահովում<br>• Սովորողների մասնագիտական կողմնորոշմանը միտված միջոցառումների ընդլայնում<br>• Օտար լեզուների խորացված ուսուցում, ցանկի ընդլայնում<br>• Հայրենասեր, մարդասեր, բարոյական բարձր հատկանիշներ և ապագայի նկատմամբ հավատ ունեցող անհատի ձևավորման նպաստում<br>• Դպրոցի գրադարանային ֆոնդի համալրում<br>• Ընդարձակ ընթերցասրահի ստեղծում<br>• Մարզային գրադարանի հետ կապի ամրապնդում |
| **8** | Տեխնոլոգիաներ և նորարարություն | • Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդրում դասապրոցեսում<br>• Ուսուցիչների մասնագիտական որակների շարունակական բարելավում և արդիականացում<br>• Մեղիագրագիտության մակարդակի բարելավում |

| | | |
|---|---|---|
| | | • Մենթորական համակարգի ներդրում<br>• Դպրոցում աշխատանքային անկյունի ստեղծում |
| **9** | Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր | • օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ անելիս, նախագծերը քննարկման ներկայացնելիս ուսուցիչների ակտիվ մասնակցություն<br>• ՆԴՎ՝ որպես ներքին իրավական ակտերի իրականացման էլեկտրոնային գործիքակազմի համալրում |

Ծրագրի իրականացման ավարտին ակնկալվում է ունենալ հետևյալ արդյունքները՝

- ❖ Ավելի հրապուրիչ ու ապահով, որակյալ կրթական միջավայր,
- ❖ Վերանորոգված ու նյութատեխնիկական բազայով առավել հագեցած առաջադեմ դպրոց,
- ❖ Փորձառությամբ ավելի հարստացած, նորարար ու ստեղծարար մանկավարժներ,
- ❖ ՏՀՏ միջոցների լիարժեք կիրառում դպրոցում՝ ժամանակի փոփոխվող պահանջներին համապատասխան,
- ❖ Ակտիվ ու համագործակցող, որոշումների կայացմանը լիովին ինտեգրված ծնողական ու աշակերտական խորհուրդ,
- ❖ Աշակերտների թվի ավելացում,
- ❖ Առաջադիմության ցուցանիշների ավելացում ինչպես հանրապետական, այնպես էլ միջազգային ԲՈՒՀ-երի ընդունելության, հանրապետական ու միջազգային օլիմպիադաների, մրցույթների ընթացքում գրանցած հաջողությունների տեսքով,

- Նախագծային աշխատանքների շնորհիվ  ստեղծագործական, քննադատական ու վերլուծական մտածողությամբ օժտված, 21-րդ դարի մարտահրավերներին պատրաստ, իրազեկ և պատասխանատու քաղաքացու ձևավորում,
- Նոր չափորոշիչների, նոր դասագրքերի ու գնահատման համակարգերի արդյունավետ յուրացում ու կիրառում,
- Մասնագիտական կողմնորոշման հանդիպումների, քննարկում-բանավեճերի միջոցով կայացած, սեփական թուլություններն ու առավելությունները, սեփական նախասիրությունները գիտակցող սովորողներ,
- Ազգային ու համամարդկային արժեքներ կրող, կարողունակ ու մրցունակ քաղաքացիներ:

## 4. ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

Հաստատության զարգացման ծրագիրը միտված է լուծելու ոլորտային մի շարք խնդիրներ: Յուրաքանչյուր ոլորտի համար սահմանված է մեկ նպատակ, որի համար սահմանված են խնդիրներ, ապա ներկայացված են այն գործողությունները, որոնց իրականացումը նպաստում է խնդրի լուծմանն ու նպատակի իրականացմանը: Ըստ յուրաքանչյուր ոլորտի՝ ներկայացված են նաև նպատակի իրականացման, խնդիրների լուծման հավանական ռիսկեր, ռիսկերի մեղմման մեխանիզմները:

**Ոլորտ 1**
Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան

**Նպատակը**

Բարելավել պայմանները, հարմարեցնել, հարստացնել, արդիականացնել նյութատեխնիկական բազան՝ նպաստելով կրթության որակի բարելավմանը

**Խնդիրներ**

- Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական միջավայրի հարստացում,
- Նյութատեխնիկական բազայի համալրում նոր՝ ժամանակակից սարքավորումներով, համակարգչային տեխնիկայով:

**Ռիսկեր**

Ոչ բավարար ֆինանսական միջոցների մուտք դպրոց այլ աղբյուրներից՝ ներառյալ դրամաշնորհներ, համայնքի, բարերարների կողմից աջակցություն և այլն:

**Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները**

- Մասնակցություն դրամաշնորհային ծրագրերի, համագործակցության ընդլայնում, արտաբյուջեի ձևավորում՝ հարստացնելու հաստատության նյութատեխնիկական բազան և բարեկարգելու դպրոցի մասնաշենքն ու մարզահրապարակը:
- Դպրոցի առօրյայի, ձեռքբերումների, սովորողների հանգստի ու ժամանցի լուսաբանում դպրոցի սոցիալական հարթակներում՝ նպաստելով ընդունելության խթանմանը:
- Համագործակցություն համայնքի նախադպրոցական հաստատությունների հետ՝ որպես ընդունելության խթանման միջոց:

| Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները | Պատասխանատու/ կատարողներ | Արդյունքների գնահատման չափանիշները | Ժամանա-կացույցը | Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները | Հնարավոր ֆինանսական ծախսը | Վերահսկողներ |
|---|---|---|---|---|---|---|
| Դպրոցի հյուսիսային կողմի հնամաշ պատուհանների փոխարինում ջերմամեկուսիչ պատուհաններով | Հաշվապահ, գնումների համակարգող, վարչատնտեսական մասի համակարգող | Անվտանգ կրթական միջավայր սովորողների համար, իսկ ջեռուցման սեզոնին զգալի կնվազեցնի ջեռուցման ծախսը | 2023-2024թթ. | Ջերմամեկուսիչ պատուհաններ, պատուհանագոգեր | Դրամաշնորհային ծրագիր /ընթացիկ/ | Կառավարման խորհուրդ, Ծնողական խորհուրդ, Լիազոր մարմին |
| Դասասենյակների համալրում նոր գույքով ըստ անհրաժեշտության | Հաշվապահ, գնումների համակարգող, վարչատնտեսական մասի համակարգող, դասղեկներ | Կմեծացնի ուսումնառության նկատմամբ հետաքրքրվածությունը, աշակերտ-ների պատասխանատվությունը, մանկավարժների աշխատանքի մոտիվացիան | 2023-2028թթ. ընթացքում՝ ըստ անհրաժեշտության | Անհրաժեշտ գույք, այդ թվում՝ հենաշարժողական խնդիրներ ունեցող սովորողների համար | Պետբյուջե, այլ համագործակցութ-յուններ | Կառավարման խորհուրդ, Ծնողական խորհուրդ, Լիազոր մարմին |
| Դասասենյակների ու համակարգչային սենյակի համալրում նոր սերնդի տեխնիկայով, ՏՀՏ-ներից տանը օգտվելու հնարավորություն չունեցող մանկավարժների և աշակերտների համար առանձնացված տարածքի կահավորում | Հաշվապահ, տնօրեն,գնումների համակարգող, վարչատնտեսական մասի համակարգող, ինֆորմատիկայի ուսուցիչ, էլեկտրոնային կառավարման և ապահովման մասնագետ | Կխթանի մանկավարժ-ների մասնագիտական զարգացմանը, կխթանի սովորողների մոտիվացիայի աճին | 2023-2028թթ. ըստ հնարավորության | Նոր սերնդի համակարգիչներ, էլեկտրոնային գրատախտակներ | Պետբյուջե, այլ համագործակցութ-յուններ | Կառավարման խորհուրդ, Ծնողական խորհուրդ, Լիազոր մարմին |
| Դպրոցի մարզահրապարակի վերանորոգում | Հաշվապահ, գնումների համակարգող, վարչատնտեսակա | Կապահովի անվտանգ ու բարեկարգ միջավայր | Մինչև 2028թ. | Շինանյութ, համապատասխան պարագաներ | Պետբյուջե, այլ համագործակցություններ, բարեգործական ներդրումներ | Կառավարման խորհուրդ, Ծնողական խորհուրդ, Լիազոր |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ն մասի համակարգող | սովորողների համար | | | | մարմին |
| Սպորտային դահլիճի կահավորում | Հաշվապահ, գնումների համակարգող, վարչատնտեսակնն մասի համակարգող | Առողջ ապրելապերպին նպաստող միջավայրի ձևավորում | 2023-2028թթ. ըստ հնարավորութ յան | Մարզագույք | Պետբյուջե, այլ համագործակցությունննե ր, բարեգործական ներդրումներ | Կառավարման խորհուրդ, Ծնողական խորհուրդ, Լիազոր մարմին |

## Ոլորտ 2

Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը

**Նպատակը**

Ֆինանսական միջոցների աճ

**Խնդիրներ**

- Արտաբյուջետային միջոցների ձևավորում,
- Դպրոցի բյուջեի աճ աշակերտների թվի ավելացման հաշվին

**Ռիսկեր**

- Պետական բյուջեից ստացվող ֆինանսական միջոցների փոխանցման հետ կապված ուշացումներ, չեղարկումներ,
- Նոր համագործակցությունների բացակայություն, դրամաշնորհային ծրագրերի հայտերի մերժում:

**Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները**

- Հետևողական աշխատանք՝ դրամաշնորհային ծրագրերի և այլ համագործակցությունների միջոցով լրացուցիչ ֆինանսական հոսքեր ապահովելու,
- Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարում,

| Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները | Պատասխանատու /կատարողներ | Արդյունքների գնահատման չափանիշները | Ժամանակացույցը | Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները | Հնարավոր ֆինանսական ծախսը | Վերահսկողներ |
|---|---|---|---|---|---|---|
| Դրաշնորհային դիմում-հայտերի պատրաստում, տարբեր կազմակերպությունների հետ համագործակցության եզրերի որոնում | Տնօրեն, մանկավարժական համակազմի՝ նման ծրագրերի փորձառություն ունեցող անդամներ | Արտաբյուջետային միջոցների ձևավորում | 2023-2028թթ. | | | Ծնողական խորհուրդ, լիազոր մարմին |
| Դպրոցի գործունեության լուսաբանում, համագործակցություն նախադպրոցական ուսումնական հաստատությունների հետ՝ խթանելու ընդունելությունը | Տնօրեն, մանկավարժական համակազմ | Աշակերտների թվի աճ 7%-ով | 2023-2028թթ. | Դպրոցի սոցիալական հարթակներ, այցելություններ | | Ծնողական խորհուրդ, լիազոր մարմին |
| Տնտեսումներ, խնայողություններ | Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող | Դպրոցի համար հավելյալ գույք | 2023-2028թթ. | | | Ծնողական խորհուրդ, Կառավարման խորհուրդ, լիազոր մարմին |

## Ոլորտ 3

Կառավարման և խորհրդակցական մարմիններ

**Նպատակը**

Կառավարման ու խորհրդակցական մարմինների դերի ու նշանակության առավելագույն ընդգծում և ակտիվացում

**Խնդիրներ**

- Շրջանավարտների խորհրդի ստեղծում,
- Ծնողական խորհրդի հետ համագործակցության բարելավում, փոխադարձ վստահության ձեռքբերում,
- Ծնողական խորհրդի ընդգրկում ուսման կարևորագույն գործառույթներում,
- Աշակերտական խորհրդի ակտիվացում և ներգրավում դպրոցի համար կարևոր նշանակություն ունեցող գործընթացներում

**Ռիսկեր**

- Կառավարման խորհրդի, շրջանավարտների, աշակերտների ու ծնողների ցածր մոտիվացիա

**Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները**

- Կառավարման խորհրդի և խորհրդակցական մարմինների մշտական ներգրավվածությունը դպրոցի խնդիրների քննարկման ու լուծման գործընթացներում

| Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները | Պատասխանատու /կատարողներ | Արդյունքների գնահատման չափանիշները | Ժամանակացույցը | Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները | Հնարավոր ֆինանսական ծախսը | Վերահսկողներ |
|---|---|---|---|---|---|---|
| Շրջանավարտների խորհրդի ստեղծում և ներգրավում դպրոցի հիմնախնդիրների քննարկմանն ու լուծմանը | Տնօրեն, կրթական աջակցության ու դաստիարակչական աշխատանքների համակարգող | Դպրոցի հիմնախնդիրների ավելի արագ լուծում ու համագործակցային մշակույթի ձևավորում | 2026թթ. | | | Լիազոր մարմին |
| Կառավարման ու խորհրդակցական մարմինների՝ արդեն ձևավորված աշխատանքային լավ հարաբերություն-ների պահպանում ու խորացում | Տնօրեն, կառավարման ու խորհրդակցական մարմինների անդամներ, կրթական աջակցության ու դաստիարակչական աշխատանքների համակարգող | Կրթական արդյունավետ ու ապահով միջավայրի ապահովում | 2023-2028թթ. | Հանդիպումների կազմակերպման ժամանակացույց և վայր | | Լիազոր մարմին |
| Խորհրդակցական մարմինների գործառույթների պատշաճ կատարում, դպրոցի գործունեության թափանցիկության ապահովում | Տնօրեն, խորհրդակցական մարմինների նախագահներ | | 2023-2028թթ. | Հանդիպումների արձանագրություն-ներ | | Լիազոր մարմին |
| Աշակերտական խորհրդի ակտիվացում: Առավել ակտիվ մասնակցություն դպրոցի համար կարևոր նշանակություն ունեցող հարցերի քննարկմանը | Տնօրեն, կրթական աջակցության ու դաստիարակչական աշխատանքների համակարգող | Ներառականության, համագործակցային միջավայրի ձևավորում | 2024-2028թթ. | Հանդիպումների արձանագրություններ | | Լիազոր մարմին, Կառա-վարման խորհուրդ |

## Ոլորտ 4

## Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ

**Նպատակը**

Ընդլայնել դպրոցի և համայնքում գործող տարբեր բնագավառների և ոլորտների կառույցների միջև կապը և ամրապնդել համագործակցության եզրերը

**Խնդիրներ**

- Սովորողների՝ հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացում
- Համագործակցությունների շրջանակի ընդլայնում մասնավորապես մասնագիտական կողմնորոշման այցերի ակտիվացման միջոցով
- Կամավորության խթանում

**Ռիսկեր**

- Մոտիվացիայի պակաս սովորողների ու ուսուցիչների մոտ՝ ակտիվ ներառվելու համայնքային տարբեր կառույցների հետ համագործակցություններում
- Այլ կառույցների կողմից դպրոցի հետ համագործակցելու մոտիվացիայի պակաս:

**Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները**

- Համայնքային նշանակության միջոցառումներին ակտիվ մասնակցություն
- Համայնքային խնդիրների վերհանում ու քննարկում դպրոցում՝ նախագծային աշխատանքների, թեմատիկ հանդիպումների ու քննարկումների շրջանակում
- Սովորողների համար մասնագիտական կողմնորոշման այցերի կազմակերպում:

| Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները | Պատասխանատու /կատարողներ | Արդյունքների գնահատման չափանիշները | Ժամանակացույցը | Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները | Հնարավոր ֆինանսական ծախսը | Վերահսկողներ |
|---|---|---|---|---|---|---|
| Համապետական շաբաթօրյակների, ծառատունկերի, հիշատակի ու տոնական օրերի, համայնքային կազմակերպությունների նախաձեռնած զանազան միոցառումներին մասնակցութուն | Տնօրեն, կրթական աջակցության ու դաստիարակչական աշխատանքների համակարգող, աշակերտական խորհուրդ, ծնողական խորհուրդ | Հասարակության մեջ ինտեգրվելու, համագործակցելու կարողություն ու հմտություն ունեցող սովորողներ | 2023-2028թթ. | Հանդիպումների, միջոցառումների ժամանակացույց և միոցառման բնույթից կախված՝ որոշակի պարագաներ | Դպրոցի ֆինանսական միջոցներից որոշ գնումների շաբաթօրյակների, ծառատունկի հետ կապված | Աշակերտական խորհուրդ, Ծնողական խորհուրդ, Կրթության կառավարման մարմին |
| Մասնագիտական կողմորոշման փոխայցերի կազմակերպում բնակավայրի գործարարների, տեղական բիզնեսների, Վայոց ձորի մարզային տարածաշրջանային քոլեջի, ինչպես նաև պետական կառույցների ներկայացուցիչների հետ | Տնօրեն, խորհրդակ-ցական մարմինների նախագահներ | Կայացած, սեփական նախասիրությունները ճանաչող ու ապագա անելիքները պատկերացնող երիտասարդներ | 2023-2028թթ. | Հանդիպումների ժամանակացույց, պայմանավոր-վածությունների ձեռքբերում | | Կրթության կառավարման մարմին, Կառավարման խորհուրդ |
| Երիտասարդական կամավորական նախաձեռնությունների օժանդակում կամավորության մշակույթը զարգացնելու նպատակով | Տնօրեն, կրթական աջակցության ու դաստիարակչական աշխատանքների համակարգող | Կամավորությունը որպես կենսակերպ ունեցող երիտասարդության ձևավորում | 2023-2028թթ. | | | Աշակերտական խորհուրդ, ծնողական խորհուրդ, Կառավարման խորհուրդ |

## Ոլորտ 5

## Ուսումնական միջավայրը

**Նպատակը**

Նպաստել ուսման որակի բարելավմանը սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական զարգացման միջոցով

**Խնդիրներ**

- Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությանը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական զարգացում,
- Կրթական ծրագրերի մատչելիության ապահովում՝ հատկապես նոր ներդրվող չափորոշիչների, գնահատման համակարգի ու դասագրքերի փոփոխությունը նկատի ունենալով,
- Ուսուցիչների շարունակական կրթության ու վերապատրաստումների ապահովում:

**Ռիսկեր**

- Նոր ներդրվող չափորոշիչների, գնահատման համակարգի ու դասագրքերի փոփոխության հետ կապված ռիսկեր,
- Մոտիվացիայի պակաս

**Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները**

- Սովորողների մշտադիտարկում, հատկորոշիչ ստուգողական աշխատանքեր
- Մանկավարժների հետ մշտական աշխատանք՝ հնարավորինս հեշտ հաղթահարելու նոր չափորոշիչներով պայմանավորված մարտահրավերները
- Սովորողների մոտիվացիան բարձրացնող նախաձեռնություններ:

| Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները | Պատասխանատու /կատարողներ | Արդյունքների գնահատման չափանիշները | Ժամանակացույցը | Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները | Հնարավոր ֆինանսական ծախսը | Վերահսկողներ |
|---|---|---|---|---|---|---|
| Անվտանգ ու ապահով ուսումնական միջավայրի ապահովում | Տնօրեն, Կրթական աջակցությունների և դաստիրարակչական աշխատանքների համակարգող դասղեկներ, քաղպաշտպանության շտաբի պետ | Աղետների և ռիսկերի պայմաններում գրագետ մարտավարություն | 2023-2028թթ. | Պաստառներ, թռուցիկներ | Տպագրական ծախսեր | Լիազոր մարմին, կառավարման խորհուրդ, ծնողական խորհուրդ |
| Դասասենյակների ու առարկայական կաբինետների շարունակական համալրում նոր գույքով, դիդակտիկ պարագաներով | Տնօրեն, Կրթական աջակցությունների և դաստիրարակչական աշխատանքների համակարգող դասղեկներ | Հաճելի ու տրամադրող ուսումնական միջավայր | 2023-2028թթ. պարբերաբար | Լաբորատոր սարքավորումներ | Պետ բյուջե, այլ միջոցներ | Տնօրեն, լիազոր մարմին, կառավարման խորհուրդ |
| Հանդիպումների, քննարկումների, զրույց-բանավեճերի կազմակերպում զանազան թեմաներով, որոնք նպատակ ունեն ապահովելու բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայր, ձևավորելու աշակերտների արժեքային համակարգը և պատրաստելու նրանց իբրև հասարակության լիիրավ անդամներ | Տնօրեն, Կրթական աջակցությունների և դաստիրարակչական աշխատանքների համակարգող դասղեկներ, զինղեկ | Գրագետ ու տեղեկացված, հանդուրժող, քննադատական ու վերլուծական մտածողություն ունեցող երիտասարդություն | 2023-2028թթ. պարբերաբար | Պաստառներ, թռուցիկներ | Տպագրական ծախսեր | Տնօրեն, լիազոր մարմին |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Երկարօրյա պարապմունքներ՝ ելնելով աշակերտների առաջադիմությունից | Տնօրեն, Կրթական աջակցությունների և դաստիրարակչական աշխատանքների համակարգող դասվարներ, դասղեկներ, մանկավարժներ | Առաջադիմությամբ աչքի չընկնող սովորողների կարողությունների բարելավում | 2023-2028թթ. Պարբերաբար | | | Տնօրեն, կառավարման խորհուրդ, ծնողական խորհուրդ, լիազոր մարմին |
| Արտադասարանական խմբակներ | Տնօրեն, Կրթական աջակցությունների և դաստիրարակչական աշխատանքների համակարգող դասվարներ, դասղեկներ, մանկավարժներ | Տարբեր առարկաներից առաջադիմող սովրողնորի կարողունակությունների բարելավում՝ առարկայական օլիմպիադաներում լավ արդյունքներ ցուցաբերելու նպատակով | 2023-2028 թթ. Պարբերաբար | | | Տնօրեն, կառավարման խորհուրդ, ծնողական խորհուրդ, լիազոր մարմին |
| Նախագծային ուսուցման արդյունավետությունը խթանող աշխատանքներ | Տնօրեն, Կրթական աջակցությունների և դաստիրարակչական աշխատանքների համակարգող դասվարներ, մանկավարժներ | Ինքնուրույն հետազոտող, վերլուծող, աշխատանքը կազմակերպող սովորողների ձևավորում | 2023-2028թթ. Պարբերաբար | | | Տնօրեն, կառավարման խորհուրդ, ծնողական խորհուրդ, լիազոր մարմին |
| ԿԱՊԿՈՒ սովորողների համար հավասար պայմանների ու հարմարեցված միջավայրի զարգացում | Տնօրեն, Կրթական աջակցությունների և դաստիրարակչական աշխատանքների համակարգող դասվարներ, հատուկ մանկավարժներ, մանկավարժներ | Բոլորի համար հավասար պայմանների առկայություն | 2023-2028թթ. Պարբերաբար | Համապատասխան գույքի ձեռքբերում | | Տնօրեն, կառավարման խորհուրդ, ծնողական խորհուրդ, լիազոր մարմին |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ուսուցիչների մասնագիտական աճն ու կարողությունների զարգացումը խթանող վերապատրաստումների շարունական մասնակցություն, պարտադիր ու կամավոր ատեստավորումներ | Տնօրեն, կրթական աջակցության ու դաստիարակչական աշխատանքների համակարգող | Ուսուցման ժամանակակից մեթոդներին ու սկզբունքներին տիրապետող, ստեղծագործ մանկավարժներ | 2023-2028թթ. Պարբերաբար | | | Աշակերտական խորհուրդ, ծնողական խորհուրդ, Կառավարման խորհուրդ |

## Ոլորտ 6

## Մանկավարժական համակազմ

**Նպատակը**

Մանկավարժական համակազմի կարողությունների շարունակական բարելավում և համալրում նոր մասնագետներով

**Խնդիրներ**

- Ուսուցիչների իրավական կարգավիճակի հստակեցում, աշխատանքի վարձատրության, խրախուսման մեխանիզմների բարելավում,
- Մասնակցություն տարբեր ձևաչափերով իրականացվող դասընթացներին և վերապատրաստումներին:
- Մանկավարժներին նորարարական գիտելիքներով զինելու նպատակով մանկավարժական գիտական հետազոտությունների խթանում,
- Մեթոդական աշխատանքների արդյունքների վերաբերյալ նյութերի ստեղծում, մշակում, ներկայացում, տպագրություն:
- Տարբեր դասարաններում նախագծային աշխատանքների իրականացման խթանում,
- Հանրակրթության նոր չափորոշչի ներդրման հետ կապված դժվարություններ ունեցող ուսուցիչներին պարբերական աջակցության տրամադրում:

**Ռիսկեր**

- Ինքնակրթության մոտիվացիայի պակաս
- Նոր չափորոշիչի, գնահատման համակարգի ու նոր դասագրքերի կիրառման հետ կապված դժվարություններ:

**Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները**

- Ուսուցիչների խրախուսման մեխանիզմների մշակում, գործարկում
- Մանկավարժների և սովորողների հետ մշտական աշխատանք՝ հայտորոշիչ գրավորների, մշտադիտարկումների միջոցով հաղթահարելու նոր չափորոշիչի գնահատման համակարգի ու նոր դասագրքերի կիրառման հետ կապված դժվարությունները:

| Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները | Պատասխանատու /կատարողներ | Արդյունքների գնահատման չափանիշները | Ժամանակացույցը | Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները | Հնարավոր ֆինանսական ծախսը | Վերահսկողներ |
|---|---|---|---|---|---|---|
| Վերապատրաստումների, պարտադիր և կամավոր ատեստացիաների խրախուսում | Տնօրենություն, մանկավարժական համակազմ, ԿԶՆԱԿ | Ուսուցման ժամանակակից մեթոդներին ու սկզբունքներին տիրապետող, ստեղծագործ մանկավարժներ | 2023-2028թթ. պարբերաբար | | | Լիազոր մարմին, կառավարման խորհուրդ, տնօրեն |
| Սեմինարների, վեբինարների, ինքնակրթության խրախուսում, ինքնավերլուծության խթանում, դասավանդման որակների արդիականացում | Տնօրեն, մեթոդմիավորման նախագահներ | Ուսուցման ժամանակակից մեթոդներին ու սկզբունքներին տիրապետող, ստեղծագործ մանկավարժներ | 2023-2028թթ. պարբերաբար | | | Լիազոր մարմին, կառավարման խորհուրդ, տնօրեն |
| Մանկավարժական գիտական հետազոտությունների խթանում | Տնօրեն, մեթոդմիավորման նախագահներ | Ուսուցման ժամանակակից մեթոդներին ու սկզբունքներին տիրապետող, ստեղծագործ մանկավարժներ | 2023-2028թթ. պարբերաբար | | | Լիազոր մարմին, կառավարման խորհուրդ, տնօրեն |
| Ուսուցիչների առաջավոր փորձի տարածում, մեթոդական աջակցություն սկսնակ ուսուցիչներին | Տնօրեն, մեթոդմիավորման նախագահներ | Ուսուցման ժամանակակից մեթոդներին ու սկզբունքներին տիրապետող, ստեղծագործ | 2023-208թթ. պարբերաբար | | | Լիազոր մարմին, կառավարման խորհուրդ, տնօրեն |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | մանկավարժներ | | | | |
| Ներդպրոցական վերահսկողութուն | Տնօրեն, մեթոդմիավորման նախագահներ | Կարգապահության մթնոլորտ, կազմակերպված աշխատանք | 2023-208թթ. պարբերաբար | | | Լիազոր մարմին, կառավարման խորհուրդ, տնօրեն |
| Նախագծային ուսուցման արդյունավետությունը խթանող աշխատանքներ | Տնօրեն, մեթոդմիավորման նախագահներ | Ուսուցման ժամանակակից մեթոդներին ու սկզբունքներին տիրապետող, ստեղծագործ մանկավարժներ | 2023-208թթ. պարբերաբար | | | Լիազոր մարմին, կառավարման խորհուրդ, տնօրեն |
| Երկարօրյա պարապմունքներ՝ ելնելով նոր ներդրված չափորոշիչների ու դասագրքերի հետ կապված հնարավոր բարդություններից | Տնօրեն, մեթոդմիավորման նախագահներ | Ստեղծագործ ու կարողունակ սովորողներ | 2023-208թթ. պարբերաբար | | | Լիազոր մարմին, կառավարման խորհուրդ, տնօրեն |

## Ոլորտ 7

## Աշակերտական համակազմ և կրթության որակը

**Նպատակը**

Կոմպետենտ (կարողունակ), մրցունակ, վերլուծող, տրամաբանող, հայրենասեր, ազգային արժեհամակարգ ունեցող քաղաքացիների ձևավորում

**Խնդիրներ**

- Սովորողների ստեղծագործական աշխատանքի, վերլուծական, քննադատական մտածողության խթանում
- Գիտելիքների ինքնուրույն ձեռքբերմանը, արժեքային համակարգի և դիրքորոշման ձևավորմանն աջակցում
- Բարձրորակ կրթության, առարկայական օլիմպիադաներում բարձր ցուցանիշների ապահովում
- Սովորողների մասնագիտական կողմնորոշմանը միտված միջոցառումների ընդլայնում
- Օտար լեզուների ուսուցման խորացում, ցանկի ընդլայնում
- Հայրենասեր, մարդասեր, բարոյական բարձր հատկանիշներ և ապագայի նկատմամբ հավատ ունեցող անհատի ձևավորման նպաստում
- Դպրոցի գրադարանային ֆոնդի համալրում
- Ընդարձակ ընթերցասրահի ստեղծում
- Մարզային գրադարանի հետ կապի ամրապնդում:

**Ռիսկեր**

- Սովորողների մոտ մոտիվացիայի ու նախաձեռնողականության պակաս

**Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները**

- Աշակերտների խրախուսման մեխանիզմների մշակում,
- Մանկավարժների կողմից պրոֆեսիոնալ մոտեցում

| Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները | Պատասխանատու /կատարողներ | Արդյունքների գնահատման չափանիշները | Ժամանակացույցը | Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները | Հնարավոր ֆինանսական ծախսը | Վերահսկողներ |
|---|---|---|---|---|---|---|
| Նախագծային աշխատանքների իրականացում | Տնօրենություն, մանկավարժական համակազմ | Ստեղծագործ, քննադատական ու վերլուծական մտածողությամբ օժտված սովորողներ | 2023-2028թթ. Պարբերաբար | | | Տնօրեն, ծնողական խորհուրդ |
| Մշտադիտարկումներ, կրթական կարիքի գնահատում և սովորողների ուսուցման անհատական մոտեցումների կիրառում դասապրոցեսում | Տնօրեն, մեթոդմիավորման նախագահներ, մանկավարժներ | Ըստ կրթական կարիքների ու ունակությունների գնահատված սովորողներ | 2023-2028թթ. Պարբերաբար | | | Կառավարման խորհուրդ, տնօրեն, ծնողական խորհուրդ |
| Արտադպրոցական խմբակներ | Տնօրեն, Կրթական աջակցությունների և դաստիրարակչական աշխատանքների համակարգող դասվարներ, դասղեկներ, մանկավարժներ | Օլիմպիադաներին բարձր արդյունքներ ցուցաբերող սովորողներ | 2023-2028թթ. Պարբերաբար | | | |
| Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված շարունակական աշխատանքներ՝ նախասիրությունների | Տնօրեն, ԿԱԴԱՀ, մանկավարժական համակազմ, դասղեկներ | Սեփական նախասիրությունները գիտակցող, ապագա մասնագիտության հարցում կողմնորոշված սովորողներ | 2023-2028թթ. Պարբերաբար | | | Տնօրեն, կառավարման խորհուրդ, ծնողական խորհուրդ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| բացահայտմանն ուղղված թեստեր, մասնագիտությունների և մարդու բնույթի համապատասխանությունը ախտորոշող թեստեր, մասնագիտությունների վերաբերյալ ֆիլմերի դիտում, ճանաչողական այցեր, հանդիպումներ, աշխատաշուկայի ներկայացում, վերլուծություն | | | | | | |
| Տարբեր թեմաներով քննարկումներ, կլոր սեղաններ, բանավեճեր | Տնօրեն, ԿԱԴԱՀ, կրթադաստիարակչա-կան մասի պատասխանատուներ | Հայրենասեր, մարդասեր, բարոյական բարձր հատկանիշներ և ապագայի նկատմամբ հավատ ունեցող սովորողներ | 2023-208թթ. Պարբերաբար | | | Տնօրեն, կառավարման խորհուրդ, ծնողական խորհուրդ |
| Աջակցություն աշակերտական խորհրդի նախաձեռնություններին | Տնօրեն, մանակավարժական համակազմ, կրթական աջակցությունների ու դաստիարակչական աշխատանքների համակարգող | Ինքնուրույն, որոշում կայացնելու կարողություն ունեցող սովորողներ | 2023-2028թթ. | | | Տնօրեն, Կառավարման խորհուրդ, Ծնողական խորհուրդ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Գրադարանային ֆոնդի ընդլայնում | Տնօրեն, մեթոդմիավորման նախագահներ գրադարանավար | Ընթերցասեր, գրքի նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունք ունեցող սովորողներ | 2023-208թթ. պարբերաբար | | Պետբյուջե, բարերարների կողմից ներդրումներ | Տնօրեն, կառավարման խորհուրդ, ծնողական խորհուրդ |
| Գրադարանի հետ միջոցառումների կազմակերպում, փոխայցեր | Տնօրեն, մեթոդմիավորման նախագահներ գրադարանավար | Ընթերցասեր, գրքի նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունք ունեցող սովորողներ | 2023-208թթ. Պարբերաբար | | | Տնօրեն, կառավարման խորհուրդ, ծնողական խորհուրդ |

## Ոլորտ 8

## Տեխնոլոգիաներ և նորարություն

**Նպատակը**

Նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ կրթության որակի բարելավում, դասավանդման մոտեցումների արդիականացում, ռեսուրսների արդիականացում

**Խնդիրներ**

- Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդրում դասապրոցեսում
- Ուսուցիչների մասնագիտական որակների շարունակական բարելավում և արդիականացում
- Մեդիագրագիտության մակարդակի բարձրացում
- Մենթորական համակարգի ներդրում

**Ռիսկեր**

- Ժամանակի պահանջներին համահունչ տեխնիկական միջոցներով դպրոցը չհագեցնելը
- Մասնագետների կողմից նորարական մոտեցումների սակավ կիրառությունը

**Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները**

- Դպրոցը տեխնոլոգիական նորարարություններով հագեցնելու ուղիների որոնում
- Մանկավարժների մոտիվացում՝ հնարավորինս հարստացնելու դասը արդի տեխնոլոգիաների կիրառմամբ

| Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները | Պատասխանատու /կատարողներ | Արդյունքների գնահատման չափանիշները | Ժամանակացույցը | Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները | Հնարավոր ֆինանսական ծախսը | Վերահսկողներ |
|---|---|---|---|---|---|---|
| Նոր սերնդի համակարգչային տեխնիկայի ձեռքբերում | Հաշվապահ, տնօրեն,գնումների համակարգող, վարչատնտեսական մասի համակարգող, ինֆորմատիկայի ուսուցիչ, էլեկտրոնային կառավարման և ապահովման մասնագետ | | 2025-2028թթ. Պարբերաբար | | | |
| Լաբորատոր սարքերի և սարքավորումների, ուսումնական նյութերի համալրում, արդիականացում | Տնօրեն, հաշվապահ, գնումների համակարգող, վարչատնտեսական մասի համակարգող, լաբորանտ | | 2025-2028թթ. Պարբերաբար | | | |
| Հեռավար դասավանդման հմտությունների զարգացում /ուսուցիչների ինքնակրթություն, սեմինարներ, վեբինարներ/ | Համակարգող, մեթոդմիավորման նախագահներ, | Մանկավարժների՝ համապատասխան մասնագիտական հմտությունների խորացում (50%) | 2023-2028թթ. Պարբերաբար | | Պետական բյուջե, արտաբյուջե-տային միջոցներ | ԿԶՆԱԿ, Լիազոր մարմին |
| Էլեկտրոնային կրթական ռեսուրսների կիրառում, ստեղծում | Տնօրեն, փոխտնօրեններ, օպերատոր | Մանկավարժների՝ համապատասխան հմտությունների խորացում (50%) | 2023-2028թթ. Պարբերաբար | | Պետական բյուջե, արտաբյուջե-տային միջոցներ | ԿԶՆԱԿ, Լիազոր մարմին |
| Մեդիագրագիտությանը խթանող միջոցառումներ, հանդիպումներ | Տնօրեն, մանկավարժական համակազմ | Մանկավարժների՝ համապատասխան հմտությունների խորացում (50%) | 2023-208թթ. Պարբերաբար | | Պետական բյուջե, արտաբյուջե-տային միջոցներ | Տնօրեն, կառավարման խորհուրդ, լիազոր մարմին |
| Մենթորական համակարգի ներդնում | Տնօրենություն, մեթոդմիավորման | Մենթոր ուսուցիչներ-մենթոր սովորողներ | 2023-2028թթ. | | | Տնօրեն, Կառավարման խորհուրդ, |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | նախագահներ | | | | | Ծնողական խորհուրդ |
| Դպրոցում համապատասխան տարածքի կահավորում տանը համակարգչով աշխատելու հնարավորություն չունեցող սովորողների ու մանկավարժների համար: | Տնօրեն, Վարչատնտեսական մասի պատասխանատու | Բարենպաստ միջավայրի առկայություն դպրոցում | 2027-2028թթ. Պարբերաբար | | Պետբյուջե, բարերարների կողմից ներդրումներ | Տնօրեն, կառավարման խորհուրդ, ծնողական խորհուրդ |

## Ոլորտ 9

## Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր

**Նպատակը**

Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի մասին մանկավարժներին իրազեկում և մասնակցություն դրանցում կատարվող փոփոխություններին

**Խնդիրներ**

- Օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ անելիս, նախագծերը քննարկման ներկայացնելիս ուսուցիչների ակտիվ մասնակցություն
- ՆԴՎ՝ որպես ներքին իրավական ակտերի իրականացման էլեկտրոնային գործիքակազմի համալրում

**Ռիսկեր**

- Մանկավարժների պասիվությունը

**Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները**

- Նախագծային քննարկումներին մասնակից դարձնելով մանկավարժների մոտ ձևավորել վստահություն, որ իրենց ձայնը լսելի է:.Ապահովել օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ անելիս, նախագծերը քննարկման ներկայացնելիս ուսուցիչների ակտիվ մասնակցությունը:

| Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները | Պատասխանատու /կատարողներ | Արդյունքների գնահատման չափանիշները | Ժամանակացույցը | Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները | Հնարավոր ֆինանսական ծախսը | Վերահսկողներ |
|---|---|---|---|---|---|---|
| Իրավական ակտերի լուսաբանում | Տնօրեն | Դպրոցի գործունեության իրավական կարգավորմանը քաաջատեղյակ մանկավարժներ | 2023-2028թթ. պարբերաբար | | | Տնօրեն, Լիազոր մարմին, Կառավարման խորհուրդ |
| e-draft.am կայքի ներկայացում, հանրային քննարկման դրված ակտերի ներկայացում | Տնօրեն | Դպրոցի գործունեության իրավական կարգավորմանը քաջատեղյակ մանկավարժներ | 2023-2028թթ. Պարբերաբար | | | Տնօրեն, Լիազոր մարմին, Կառավարման խորհուրդ |
| ՆԴՎ իրականացման էլեկտրոնային գործիքակազմի համալրում | Տնօրենություն, մեթոդմիավորման նախագահներ | Հեշտացված ընթացակարգեր | 2023-2028թթ. Պարբերաբար | | | Տնօրեն, Լիազոր մարմին, Կառավարման խորհուրդ |

## 5. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունն իրականացնում է դպրոցի խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն:

Ծրագրի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը հնգամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են, դրանց համապատասխանությունը զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներին ու պահանջներին:

**Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողության արդյունավետ միջոցառումներ են.**

**1.** Դպրոցի խորհրդի կողմից առնվազն տարեկան երկու անգամ դպրոցի տվյալ ուսումնական տարվա աշխատանքային ծրագրում ընդգրկված դպրոցի զարգացման ծրագրի դրույթների կատարողականների հաշվետվությունների քննարկումը և համապատասխան գնահատականների ամրագրումը ըստ **Աղյուսակ 1-ի,**

**2.** Դպրոցի խորհրդի կողմից տնօրենին խորհրդատվական և այլ աջակցության շարունակական տրամադրումը,

**3.** Համայնքի և դպրոցի այլ շահառուների՝ դպրոցի զարգացման ծրագրի իրականացման աշխատանքներին կամ այդ շրջանակում կազմակերպված միջոցառումներին շարունակական ներգրավումը,

**4.** Դպրոցի խորհրդի մասնակցությունը տնօրենության կողմից դպրոցի զարգացման ծրագրի արդյունքների գնահատմանը,

**5.** Յուրաքանչյուր գործողության համար մշակված վերահսկողության մեխանիզմներ, որոնք հաստատված են խորհրդի կողմից,

**6.** Յուրաքանչյուր գործողության համար սահմանված հաշվետվությունների ձևեր ու ժամանակացույց, որոնք հաստատված են խորհրդի կողմից,

**7.** Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին տարեկան աշխատանքային պլանի մշակում,

**8.** Յուրաքանչյուր տարվա ավարտին ծրագրի վերանայում՝ ըստ ներքին գնահատման արդյունքերի,

**9.** Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին վերանայված ծրագրի հաստատում մանկավարժական և կառավարման խորհուրդների կողմից:

*Աղյուսակ 1: Զարգացման ծրագրի կատարման արդյունքի գնահատման չափանիշներ*

| h/h | Գնահատման ենթակա գործողության բնույթը | Արդյունքի գնահատականը | Արդյունքի գնահատման չափանիշները |
|---|---|---|---|
| **1** | Գույքի ձեռքբերում | 5 (գերազանց)<br>4 (շատ լավ)<br>3 (բավարար)<br>2 (վատ)<br>1 (անբավարար) | Ամբողջությամբ ձեռք է բերվել նախատեսված գույքը,<br>գույքը ձեռք է բերվել մասնակի՝ նախատեսվածի 75%-ի չափով,<br>գույքը ձեռք է բերվել մասնակի՝ նախատեսվածի 50%-ի չափով,<br>գույքը ձեռք է բերվել մասնակի՝ նախատեսվածի 25%-ի չափով,<br>նախատեսված գույքը ձեռք չի բերվել: |
| **2** | Ուսումնական հաստատության շենքային պայմանների և տարածքի արդիականացում | 5(գերազանց)<br>4 (շատ լավ)<br>3 (բավարար)<br>2 (վատ)<br>1 (անբավարար) | Աշխատանքները կատարվել են ամբողջ ծավալով,<br>աշխատանքները կատարվել են մասնակի՝ նախատեսվածի 75%-ի չափով,<br>աշխատանքները կատարվել են մասնակի՝ նախատեսվածի 50%-ի չափով,<br>աշխատանքները կատարվել են մասնակի՝ նախատեսվածի 25%-ի չափով,<br>նախատեսված աշխատանքները չեն կատարվել: |
| **3** | Սովորողների կրթության որակի և առաջադիմության բարձրացում | 5(գերազանց)<br>4 (շատ լավ)<br>3 (բավարար) | Սովորողների կրթության որակն ու առաջադիմությունը փաստարկված են, բերված են թվային հիմնավորումներ,<br>գործողության իրականացումն էապես ազդել է սովորողների կրթության որակի և առաջադիմության վրա,<br>գործողության իրականացումը սովորողների կրթության որակի և առաջադիմության վրա ունեցել է չափավոր ազդեցություն, որը |

| | | | |
|---|---|---|---|
| | | 2 (վատ)<br><br>1 (անբավարար) | գնահատելը խնդրահարույց է,<br>գործողության իրականացումը սովորողների կրթության որակի և առաջադիմության վրա ունեցել է ոչ նշանակալի ազդեցություն, հատկացված ռեսուրսների ծախսումը չի արդարացվել,<br>սովորողների կրթության որակի և առաջադիմության վրա գործողության ազդեցությունը բացակայում է: |
| **4** | Դպրոցում բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի ստեղծում | 5(գերազանց)<br><br>4 (շատ լավ)<br><br>3 (բավարար)<br><br>2 (վատ)<br><br>1 (անբավարար) | Դպրոցում երաշխավորված են այլակարծությունը, սովորողների շահերի ու իրավունքների պաշտպանությունը, ուսումնական գործընթացում բոլոր սովորողների ներառականությունը, ձևավորված է մասնակցային, սովորողների ինքնաարտահայման ու ինքնադրսևորման նպաստավոր միջավայր, խթանվում է ազգային և համամարդկային արժեքների համակարգը,<br><br>դպրոցում այլակարծությունը սահմանափակող, սովորողների շահերն ու իրավունքերը ոտնահարող դեպքեր հազվադեպ են գրանցվում, իրականցվում է արդյունավետ վերահսկողություն, առկա է սահմանափակ ներառական միջավայր,<br><br>դպրոցում սահմանափակվում է այլակարծությունը, սովորողների շահերի ու իրավունքերի պաշտպանությունը նշանակալի արդյունք չի ապահովում, ձևավորված չէ ներառական միջավայր, ազգային և համամարդկային արժեքների մասին սովորողների պատկերացումները աղավաղված են,<br><br>դպրոցում այլակարծությունը, սովորողների շահերի ու իրավունքերի պաշտպանության համակարգային մոտեցում առկա չէ, կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաներն առանձնացված են ուսումնական գործընթացից,<br><br>դպրոցում այլակարծությունը, սովորողների շահերն ու իրավունքերի պաշտպանությունը երաշխավորված չէ, ներառական և մասնակցային արժեքային միջավայր ձևավորված չէ: |
| **5** | Դպրոցի անձնակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության | 5(գերազանց) | Անձնակազմի արժևորումն ընկած է դպրոցի կառավարման հիմքում, անձնակազմի խրախոսումն իրականացվում է գնահատման չափանիշների բազմագործոն (աշխատողի |

| | | | |
|---|---|---|---|
| | միջավայրի ձևավորում | | ինքնակրթություն, մասնագիտական զարգացում, նախագծային աշխատանքների որակ, տարբեր միջոցառումների կազմակերպում և նախաձեռնողականություն, սովորողների գրանցած արդյունքները տարբեր մրցույթներում) համակարգի կիրառության հիման վրա, |
| | | 4 (շատ լավ) | խրախուսման համակարգը վայելում է անձնակազմի աջակցությունը, ձևավորված է անձնակազմի ինքնակրթության նպաստավոր միջավայր, անձնակազմն աչքի է ընկնում սեփական նախաձեռնություններով, այդ թվում՝ վերապատրաստումների մասնակցությամբ, |
| | | 3 (բավարար) | առկա է արժանիքների հիման վրա անձնակազմի խրախուսում, որին, սակայն, անձնակազմը վերապահումով է մոտենում, դպրոցում առկա է անձնակազմի ինքնակրթության բարենպաստ միջավայր, |
| | | 2 (վատ) | անձնակազմի խրախուսման համակարգը պրակտիկայում չի գործում, դպրոցում անձնակազմի ինքնակրթության բոլոր պայմաններն ապահովված չեն, անձնակազմը սեփական նախաձեռնություններով հանդես է գալիս հազվադեպ, անձնակազմի խրախուսման ժամանակ հաշվի են առնվում գնահատման սահմանափակ թվով չափանիշներ, |
| | | 1 (անբավարար) | դպրոցն անձնակազմի ինքնակրթության նպաստավոր միջավայր չէ, անձնակազմը մոտիվացված չէ սեփական նախաձեռնություններով հանդես գալու հարցում, գնահատման չափանիշների համակարգի հիման վրա խրախուսում չի իրականացվում: |
| **6** | Համագործակցություն կառավարման և խորհրդակցական մարմինների հետ | 5(գերազանց) | Տնօրենի և կառավարման ու խորհրդակցական մարմինների միջև հաստատված է արդյունավետ երկխոսություն, նիստերը կրում են պարբերական բնույթ, որոնց շրջանակներում քննարկվում են դպրոցում կրթության կազմակերպման օրակարգային հարցերը, |
| | | 4 (շատ լավ) | տնօրենի և կառավարման ու խորհրդակցական մարմինների միջև առկա է փոխվստահելի հաղորդակցություն, նիստերի կազմակերպում կազմակերպվում են ոչ հաճախակի՝ ոչ բոլոր անդամների մասնակցությամբ, |

| | | | |
|---|---|---|---|
| | | 3 (բավարար) | կառավարման ու խորհրդակցական մարմինների հետ համագործակցությունն իրականացվում է տնօրենի նախաձեռնությամբ, խորհրդակցական մարմինների անդամները թերահավատորեն են մոտենում դպրոցում ուսումնական գործընթացի կազմակերպման հարցում ներգրավմանը, |
| | | 2 (վատ) | առկա է ընդհատ հաղորդակցություն տնօրենի և կառավարման ու խորհրդակցական մարմինների միջև, խորհրդակցական մարմինները դպրոցի կառավարմանն առնչվող հարցերի քննարկման ժամանակ հանդես են գալիս միայն որպես ունկնդիր, |
| | | 1 (անբավարար) | տնօրենի և կառավարման ու խորհրդակցական մարմինների միջև համագործակցությունը կրում է ֆորմալ բնույթ, նիստեր չեն կազմակերպվում, կառավարումն իրականացվում է միանձնյա: |
| **7** | ՏԻՄ-ի, ծնողական համայքնի, գործընկերների հետ համագործակցության խորացում | 5(գերազանց) | ՏԻՄ-ի և այլ գործընկերների հետ ձևավորված է ամենօրյա հաղորդակցություն, ծնողական համայնքն ակտիվորեն ներգրավված է ուսումնադաստիարակչական գործընթացում, |
| | | 4 (շատ լավ) | ՏԻՄ-ի և այլ գործընկերների հետ ձևավորված է արդյունավետ համագործակցություն, ծնողական համայնքը ներգրավված է ուսումնադաստիարակչական գործընթացում, սակայն սեփական նախաձեռնություններով հանդես չի գալիս, |
| | | 3 (բավարար) | ՏԻՄ-ի և այլ գործընկերների հետ ձևավորված է սահմանափակ համագործակցություն, ծնողական համայնքն ուսումնադաստիարակչական գործընթացում ներգրավվածությամբ աչքի չի ընկնում, |
| | | 2 (վատ) | ՏԻՄ-ի և այլ գործընկերների հետ համագործակցությունը ֆորմալ բնույթ է կրում, ծնողական համայնքն ուսումնադաստիարակչական գործընթացում չունի բավարար ներգրավվածություն, |
| | | 1 (անբավարար) | բացակայում է դպրոցի կապը ՏԻՄ-ի, ծնողական համայքնի, գործընկերների հետ: |

| | | | |
|---|---|---|---|
| **8** | Դպրոցում հալածանքի, օտարման և բռնության կանխարգելում | 5(գերազանց)<br><br>4 (շատ լավ)<br><br>3 (բավարար)<br><br>2 (վատ)<br><br>1 (անբավարար) | Դպրոցում բացառված են հալածանքի, օտարման և բռնության դեպքերը, առկա է առողջ բարոյահոգեբանական միջավայր,<br><br>աշխատանքներ են տարվում բռնություն ծնող վարվելակերպը բացառելու ուղղությամբ, յուրաքանչյուր սովորող տեղեկացված է իր իրավունքներից ու պարտականություններից,<br><br>բռնության դեպքերի կանխարգելման գործում ներգրավվում են նաև իրավապահ մարմինների ներկայացուցիչները,<br><br>կազմակերպվում են առանձին քննարկումներ, դպրոցում հալածանքի, օտարման և բռնության դեպքեր հազվադեպ են գրանցվում,<br><br>յուրաքանչյուր դեպքի համար իրականացվում է այդ իրավիճակը պայմանավորող գործոնների ուսումնասիրություն, մշակվում է դրանց կրկնությունը կանխարգելող գործողությունների ծրագիր: |
| **9** | Դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի շուրջ աշխատանքներ | 5(գերազանց)<br><br>4 (շատ լավ)<br><br>3 (բավարար)<br><br>2 (վատ) | Դպրոցում կազմվող իրավական ակտերի նախագծային փուլում առկա է անձնակազմի լայն ներգրավվածություն, կազմակերպվում են նախագծերի քննարկումներ, անձնակազմը լավ տեղեկացված է դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտերից,<br><br>դպրոցում իրավական ակտերի կազմման գործում առկա է անձնակազմի սահմանափակ ներգրավվածություն, նախագծերի քննարկումներ կազմակերպվում են հազվադեպ, անձնակազմը տեղեկացված է դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտերից,<br><br>դպրոցում իրավական ակտերի կազմման գործում առկա է անձնակազմի սահմանափակ ներգրավվածություն, նախագծերի քննարկումներ չեն կազմակերպվում, անձնակազմը բավարար չափով տեղեկացված չէ դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտերից,<br><br>դպրոցում իրավական ակտերի կազմման գործում առկա չէ անձնակազմի բավարար ներգրավվածություն, նախագծերի քննարկումներ |

| | | | |
|---|---|---|---|
| | | 1 (անբավարար) | չեն կազմակերպվում, անձնակազմը բավարար չափով տեղեկացված չէ դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտերից,<br><br>դպրոցում իրավական ակտերը կազմվում են առանց անձնակազմի ներգրավվածություն, անձնակազմը տեղեկացված չէ դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտերից: |

Զարգացման ծրագրի նպատակների և խնդիրների իրագործմանն ուղղված յուրաքանչյուր գործողության կատարման համար նախատեսում ենք սահմանել հաշվետվության հետևյալ ձևը.

**Հաշվետվության ձև**

Զարգացման ծրագրի նպատակների և խնդիրների իրագործմանն ուղղված յուրաքանչյուր գործողության կատարման վերաբերյալ.

| N | Միջոցառումը (գործողությունը) | Ակնկալվող արդյունքը | Սահմանված ժամկետը, կատարողները | Կատարված աշխատանքի նկարագրությունը | Սահմանված ժամկետում միջոցառման (գործողության) չկատարման կամ  մասնակի կատարման (առկայության դեպքում) պատճառները | Զարգացման ծրագրում փոփոխությու ններ և լրացումներ կատարելու մասին առաջարկությունները | Գործողության կատարման արդյունքի գնահատումը (գերազանց, լավ, բավարար, անբավարար) | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | | | | | | | | |
| 2 | | | | | | | | |

# ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

<<ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի Հովհաննես Հովհաննիսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2023-2028 թվականների զարգացման ծրագիրը բխում է ՀՀ օրենսդրության պահանջներից, հաստատության հնարավորություններից ու մարտահրավերներից, համայնքի առանձնահատկություններից և շահառուների կարիքներից: Այն ներառում է դպրոցի շարունակական զարգացմանն ուղղված հետևյալ ուղղությունները՝

- ուրվագծում է դպրոցի ապագայի տեսլականը և սահմանում է հստակ, հասանելի նպատակներ,
- ցուցաբերում է կառուցողական մոտեցում՝ բացահայտելով այն ոլորտները, որոնք բարելավման կարիք ունեն,
- հնարավոր է դարձնում դպրոցի առկա և համալրվող ռեսուրսների արդյունավետ բաշխումը,
- դպրոցի առաջընթացը գնահատելու և կատարված աշխատանքների արդյունավետությունը հրապարակելու նպատակով սահմանում է գնահատման չափանիշներ,
- սովորողների կրթական կարիքների հիման վրա առաջադրում է նպատակային, սովորողակենտրոն, մասնակցային, բազմակարծիք, անհատական ուսուցման ռազմավարություններ,
- արդիական պահանջներին, տեխնոլոգիաներին և լավագույն փորձին համապատասխան ներակայացնում է փոփոխությունների կառավարում,
- ապահովում է հանրակրթական պետական ծրագրերի իրականացման գործընթացում ներգրավված կողմերի հետ արդյունավետ հաղորդակցություն,
- առաջադրում է դպրոցի զարգացման երկարաժամկետ կայունությունն ու հաջողությունը ապահովող մոտեցումներ:

Զարգացման ծրագրում տեղ գտած դրույթները իրատեսական են, իրագործելի, վերջնարդյունքները՝ չափելի:

Ծրագրի իրագործման արդյունքում նպատակ ունենք հասնելու դպրոցի գործունեության հիմնական նպատակի իրագործմանը, այն է՝ 21-րդ դարի պահանջներին համաչափ քայլող կարողունակ և մրցունակ քաղաքացու ձևավորմանը:

Զարգացման ծրագիրը ենթակա է փոփոխությունների ժամանակակից կրթական պահանջների դինամիկ փոփոխություններին համահունչ՝ ներքին կամ արտաքին գործոնների օբյեկտիվ ազդեցությունների դեպքում: